Ազգ
AZG
armenian newspaper

Հոկտեմբեր 24
1992
Շաբաթ

օրաթերթ
Բ տարի, թիվ 116 (208)
գինը 2 ռ.

Երեւան 375010
Հանրապետության 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 CPIRI SU

Թուրքիայից ցորենի առաջին բեռնաքանակները կստացվեն եկող շաբաթ

Երեկ Հայաստանի վարչապետ Խոսրով Հարությունյանն այցելեց Ախուրյան կայարան եւ ծանոթացավ Թուրքիայից ուղարկվող հացահատիկի ընդունման նախապատրաստական աշխատանքներին։ Նախատեսվում է, որ դրանք կավարտվեն վաղը եւ ցորենի առաջին բեռնաքանակները կստացվեն եկող շաբաթ։

Գյումրիում ունեցած աշխատանքային հանդիպումից հետո վարչապետը մեկնեց Թումանյանի շրջան, ուր Վրաստանին սահմանակից Ջիլիզա գյուղում ծանոթացավ այն ճանապարհի շինարարության ընթացքին, որը Ալավերդի քաղաքը կկապի Վրաստանի հայաբնակ շրջաններին։ ■

Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդիպեց Էդուարդ Շեւարդնաձեի հետ

Երեկ Թբիլիսիում տեղի ունեցած հայ-վրացական բանակցությունները տեւեցին երկու ժամ, որի ընթացքում քննարկվեցին Հյուսիսային Օսիայում պայթյունի հետեւանքով երկու հանրապետություններում ստեղծված իրավիճակը, շրջանային քաղաքականության, կազմակերպչական եւ տեխնիկական բնույթի այլ հարցեր, որոնք հիմնականում կապված էին երկաթուղու կայուն աշխատանքի եւ Փոթիից ու Բաթումից ցորենի տեղափոխման խնդիրների հետ։ Այդ մասին մեզ հաղորդեց Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Ռուբեն Շուգարյանը։ Հաղորդման համաձայն, առանձնազրույցներ են ունեցել Լ. Տեր-Պետրոսյանն ու Է. Շեւարդնաձեն, ինչպես նաեւ պետնախարար Վիգեն Չիտեչյանն ու վարչապետ Թենգիզ Սիգուան։ Կողմերի գնահատմամբ, հանդիպումն անցել է հաջող։ Նույն օրը Հայաստանի պատվիրակությունը վերադարձավ Երեւան։ ■

ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԸ ԹՈՂՆՈՒՄ ԵՆ ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԵՐԸ

Թշնամին նահանջում է նաեւ Ղոչազից

«Սնարք» գործակալության թղթակիցը Ստեփանակերտից հաղորդում է, թե անցած գիշերվա ընթացքում Ղարաբաղի ռազմաճակատներում լուրջ փոփոխություններ տեղի չեն ունեցել։ Հոկտեմբերի 22-ի եւ լույս 23-ի գիշերը գնդակոծվել եւ հրետակոծվել են ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի դիրքերը Մարտունու շրջանում։ Միաժամանակ զենքի տարբեր տեսակներից հրետակոծվել է Հադրութի շրջանի Էդիլլու գյուղը։ Տուժածների մասին տեղեկություններ չկան։

Ինչպես երեկ «Սնարք»-ի թղթակցին հայտնել է ԼՂՀ ԳԽ պաշտպանության եւ անվտանգության մշտական հանձնաժողովի նախագահ Վալերի Բալայանը, Ղարաբաղի Հադրութի շրջանում մի շարք հայկական գյուղեր ազատագրվել են ադրբեջանական բանակից։ Նա հայտնել է նաեւ, թե վերջին մի քանի օրերի ընթացքում Լաչինի մարդասիրական միջանցքի մատույցներում ծավալված մարտերի հետեւանքով ադրբեջանական կազմավորումներն ստիպված են եղել նահանջել հյուսիս՝ թողնելով Ղոչազ գյուղը։

Միաժամանակ ռազմական մասնագետներն այն կարծիքին են հայտնել, որ ցրտերն ընկնելուց հետո ռազմական գործողությունների ակտիվությունը նկատելիորեն կնվազի։

Հիշեցնենք նաեւ, որ նախօրեին ինքնապաշտպանության ուժերը թշնամուց ազատագրել էին նաեւ Խրմանլար գյուղը։ ■

Ադրբեջանական կողմը չի կատարում պարտավորությունները

Ինչպես հաղորդում է «Սնարք» գործակալությունը, երեկ կեսօրից հետո տանկերից, հաուբիցներից եւ ականանետներից հրետակոծվել են Իջեւանի շրջանի սահմանամերձ գյուղերը։ Հայաստանի պաշտպանության նախարարությունից հայտնում են, որ չնայած պայմանավորվածության ձեռք բերմանը, ադրբեջանական կողմը դուրս չի բերում իր կազմավորումները եւ մարտական տեխնիկան սահմանամերձ գոտուց։ Այդ փաստը արձանագրվել է ռուսաստանյան դիտորդների կողմից, որոնք վկայել են նաեւ, որ հայկական կողմը պատասխան գործողությունների չի դիմել։

Այսօր Իջեւանի եւ Ղազախի շրջանների սահմանագծում պետք է սկսվի զինված կազմավորումների հետ քաշումը, որը թույլ կտա վերականգնել երկաթուղին եւ գնացքների երթեւեկությունը։ Այսօր հայ-նախիջեւանյան սահմանագծում տեղի կունենա նաեւ երկու հանրապետությունների մաքսատների ներկայացուցիչների հանդիպումը։ ■

Թուրք բանակը մտավ Իրաք

Վարչապետ Սուլեյման Դեմիրելը երեկ հաստատեց, թե Հարավային Թուրքիայում քրդական ապստամբական խմբավորումների եւ հատկապես PKK-ի դեմ ձեռնարկած գործողությունները ծավալվել են նաեւ իրաքյան սահմաններից ներս։ 5000 հոգանոց թուրքական մի զորախումբ, օդանավերով պաշտպանված, երեկ 10 կմ խորացել է Հյուսիսային Իրաքում։ Դեմիրելն իր բանակի գործողություններն արդարացրեց որպես «օրինական անվտանգության օպերացիա»։ Թուրքական հեռուստատեսությունը երեկ գիշեր ցույց տվեց պատերազմական գործողությունների ահավոր տեսարաններ, օդուժի եւ ծանր հրետանու մասնակցությամբ։ Զոհերի քանակի մասին առայժմ որեւէ տեղեկություն չկա։ Թուրքական բանակին դիմագրավում են PKK-ի շուրջ 7 հազար զինյալներ։ ■

Քլինթոն՝ 47, Բուշ՝ 28, Պերո՝ 19 տոկոս

1008 ընտրողների մոտ Wall Street Journal-ի եւ NBC News-ի համատեղ անցկացրած սոցիոլոգիական հարցման վերջին արդյունքներով դեմոկրատ թեկնածուն 47 տոկոսով մեծապես առաջ է անցել նախագահ Բուշից, որը վայելում է ընտրողների միայն 28 տոկոսի վստահությունը, մինչ անկախ թեկնածու Պերոն 19 տոկոսով վերագրավել է 3-րդ դիրքը։ Հասարակական հարցման արդյունքները ցույց են տալիս նաեւ, որ Քլինթոնի վայելած վստահությունն ավելի կայուն է, քան Բուշինը։ Նրա թիկունք կանգնողներից 76 տոկոսը հաստատել է, թե ոչ մի պարագայում չի փոխի իր մտադրությունը, մինչ Բուշի կողմնակիցները միայն 65 տոկոսով են ինքնավստահ։ Հատկապես տնտեսության գծով նախագահի քաղաքականությունն ամենաքիչ ժողովրդականությունն է վայելում վերջին 4 տարիներին։ Մյուս կողմից՝ ամերիկյան արդյունաբերական ձեռնարկությունները ու ապահովագրական ընկերությունները շուրջ 205 միլիոն դոլլար են ծախսել ընտրական նպատակներով։ ■

Հակառակորդի մեծ կուտակումներ Կրասնոսելսկի սահմաններին

Ինչպես հաղորդում է «Սնարք» գործակալությունը, Հայաստանի պաշտպանության նախարարությունից տեղեկացրել են, թե հոկտեմբերի 22-ի երեկոյան ադրբեջանական բանակը չորսժամյա հրետակոծության է ենթարկել Տավուշի շրջանի սահմանամերձ Մովսես եւ Այգեպար գյուղերը։ Թշնամին օգտագործել է տանկեր, հետեւակի մարտական մեքենաներ, «Գրադ» կայանքներ եւ ականանետներ։ Հայկական ուժերը ստիպված են եղել պատասխան կրակ բացել։

Միաժամանակ գնդակոծության են ենթարկվել նաեւ Սիսիանի շրջանի հայկական սահմանապահ ուղեկալները։ Հետեւանքների մասին տեղեկություններ չեն հայտնվում։

«Նոյյան տապան»-ը տեղեկացնում է, թե հոկտեմբերի լույս 23-ի գիշերը հրետակոծվել են Տավուշի շրջանի Մովսես, Ներքին Կարմիրաղբյուր, Այգեպար եւ Չինարի գյուղերը։ Կան ավերածություններ։ Նույն գիշեր ծանր հրետանուց կրակ է բացվել նաեւ Վարդենիսի շրջանի Սոթք ավանի ուղղությամբ։ Տուժածներ չկան։

Նույն գործակալությունը վկայակոչելով Կրասնոսելսկի շրջանի պարետատան սպաներին, տեղեկացնում է, որ թեեւ իրավիճակը շրջանում անցած գիշեր հանգիստ է եղել, այնուամենայնիվ նկատվում է լարվածություն, քանի որ Գետաբեկի շրջանի սահմանամերձ հատվածում նկատվում են թշնամու մարտական տեխնիկայի եւ կենդանի ուժի մեծ կուտակումներ։

Մնացած շրջաններում իրավիճակը համեմատաբար հանգիստ է եղել։ ■

Մոսկվայում Ֆրանսիայի դեսպանատունը հերքում է հայերին «Միրաժ» վաճառելու լուրը

Մոսկվայում Ֆրանսիայի դեսպանատունը հերքել է Ադրբեջանի այն հայտարարությունը, համաձայն որի Հայաստանը Ֆրանսիայից գնել է «Միրաժ» տիպի ինքնաթիռներ։ Դեսպանատան պաշտոնական ներկայացուցիչը «ԻՖ»-ի թղթակցին հայտնել է, թե Փարիզը *«մտադիր չէ խորացնել Հայաստանի եւ Ադրբեջանի հակամարտությունը»* եւ որ Ֆրանսիան չի զբաղվում հակամարտության կեսեր զենքի առաքումով։

Թեեւ Ֆրանսիայում բնակվում են «զգալի թվով» հայեր, նշել է նա, դա չի նշանակում, թե Փարիզը հանդես է գալիս Հայաստանի կողմից։ *«Մենք չեզոքություն ենք պահպանում»*, շեշտել է Մոսկվայում Ֆրանսիայի դեսպանատան ներկայացուցիչը։

Հիշեցնենք, որ ադրբեջանական կողմը լուրեր էր տարածել նաեւ, թե հայերը Մ. Նահանգներում եւ Ֆրանսիայում գնել են «Ֆանտոմ» տիպի ինքնաթիռներ։ ■

Շարունակվում են բախումները Տաջիկստանի հարավում

Ինչպես «ԻՖ»-ին հաղորդեց Տաջիկստանի Ազգային անվտանգության կոմիտեի հասարակական անվտանգության վարչության պետ Ռուստոն Երովը, հոկտեմբերի 22-ին Կուրգան-Տյուբեի մարզի Կոլխոզաբադ շրջկենտրոնի մատույցներում տեղի էին ունենում մարտական գործողություններ։ Դրանց մասնակցում էին քաղաքական տարբեր կողմնորոշում ունեցող հակամարտ խմբավորումներ, որոնցից մեկն իր ձեռքում է պահում Կուրգան-Տյուբեն, իսկ մյուսը վերահսկում է Կոլխոզաբադը։

Ռ. Երովի խոսքերով, շրջկենտրոնի մատույցները գնդակոծվում էին ավտոմատ զենքի բոլոր տեսակներից, ինչպես նաեւ զրահատեխնիկայից։ Փոխհրաձգության հետեւանքով կան զոհեր, որոնց թիվը դեռ հայտնի չէ։ Երեկ բախումները Կոլխոզաբադի շրջանում շարունակվում էին։

Հոկտեմբերի 22-ին Կոլխոզաբադի ճանապարհին սպանվել է Կուրգան-Տյուբեի ներքին գործերի բաժնի պետը։

Ռ. Երովը նշեց, թե շարունակվում են Դուշանբե հասնել փախստականների նորանոր խմբեր, որոնց թիվը հասնում է 40 հազարի։ ■

Ռուս դեմոկրատները մտահոգված ռեւանշի սպառնալիքով

«Դեմոկրատական Ռուսաստան» եւ «Ռադիկալ դեմոկրատներ» խորհրդարանական խմբակցությունները գտնում են, որ Ռուսաստանում կա *«ռեւանշիստական ուժերի իշխանության գլուխ գալու սպառնալիքը»*։ Դա կարող է տեղի ունենալ արդեն այս տարի, Ռուսաստանի ժողովրդական պատգամավորների 7-րդ համագումարում։ «ԻՖ»-ին տված հայտարարության մեջ այդ խմբակցությունները ամբողջովին կիսում են Անդրեյ Կոզիրեւի, Միխայիլ Պոլտորանինի եւ Գենադի Բուրբուլիսի մտահոգությունը երկրում ստեղծված իրավիճակի կապակցությամբ։

Դեմոկրատական ուղղվածության խորհրդարանական խմբակցությունները որպես ծայրահեղական բնույթի միջոցառում են գնահատել ընդդիմության կողմից հոկտեմբերի 24-ին Մոսկվայում կազմակերպվող համաժողովրդական «Վեչե-2» հավաքը։

Դեմոկրատները հատկապես մտահոգված են Ռուսլան Խասբուլատովի փաստացի բռնատիրությամբ։ *«Հաշվի առնելով նրա առողջական վիճակը եւ պառլամենտի անկանխատեսելիությունը, կարելի է գալ հետեւյալ եզրակացության. վտանգի է ենթարկվում ոչ միայն նախագահի եւ կառավարության ներկայիս կուրսը, այլ նաեւ զարգացման քաղաքական ճանապարհի պահպանման հնարավորությունները»*, ասվում է երկու խմբակցությունների հայտարարության մեջ։ ■

Սերբ, խորվաթ եւ իսլամ հրամանատարների հանդիպում

Հարավսլավիայում ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի հրամանատար Ֆիլիպ Մորիանի ներկայությամբ երեկ առաջին անգամ իրար մոտ եկան սերբ, խորվաթ եւ իսլամ հակամարտ կողմերի հրամանատարները եւ քննարկեցին միջազգային մարդասիրական օգնություններին արգելք չդառնալու պայմանները։ Մյուս կողմից, Մ. Նահանգների ներկայացուցիչը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին հանձնեց նախկին Հարավսլավիայում քաղաքացիների ջարդերի, անդամահատվածների, բանտարկյալների տանջահարման եւ ունեցվածքի քանդման մասին մի նոր տեղեկագիր։ Նման մի տեղեկագիր հանձնվել էր անցյալ ամիս։ ■

Կատաղի բախումներ հնդկական Քաշմիրում

Երեկ ոստիկանության հետ կատաղի բախումներ տեղի ունեցան հնդկական Քաշմիրում, որտեղ վերջին շաբաթներին իրավիճակը խիստ լարվել էր դարձյալ։ Սպանվեցին եւ վիրավորվեցին մի քանի տասնյակ մարդ։ Այսօր կացությունը կարող է ավելի եւս լարվել, նկատի ունենալով պակիստանյան Քաշմիրից բազմահազար սիկխերի Հնդկաստանի սահմաններից ներս ցույցի գնալու սպառնալիքը։ ■

Վիգեն Չիտեչյան. «Ռուսաստանն ամեն ինչ անում է գազատարի վթարը վերացնելու համար»

Հայաստանի նախագահը եւ պետնախարարը մեկնեցին Վրաստան

Երեկ Հայաստանի կառավարությունում անցկացված բրիֆինգի ժամանակ մամուլի ծառայության ղեկավար Վլադիմիր Մանոյանը անդրադառնալով Հայաստան մտնող գազատարի վթարի մանրամասներին, նշեց, որ այն տեղի է ունեցել հոկտեմբերի 20-ին, ժամը 3:55, Հյուսիսային Օսիայի Կամբիլեւկա գետի վրայով անցնող հիմնական գազամուղի վրա, որի հետեւանքով շարքից դուրս են եկել 300 մետր երկարությամբ 1400 մմ տրամագծով հատվածը եւ ջրա հենարաններից երկուսը: Այդ պահից գազամատակարարումը լիովին դադարեցվել է, բայց նույն օրը հայ շինարարների մասնակցությամբ սկսվել են վերականգնողական աշխատանքները, իսկ ժամը 21-ին հաջողվել է միացնել 700 մմ տրամագծով պահեստային գազամուղը, որի շնորհիվ երեկոյան վերականգնվել է գազամատակարարումը՝ խիստ սահմանափակ քանակությամբ:

Իր հերթին, Հայաստանի պետական նախարար Վիգեն Չիտեչյանն ավելացրեց, որ այդ առթիվ տարվում է հետաքննություն եւ ըստ նախնական տվյալների, գազատարի պայթյունը եղել է դիվերսիայի հետեւանք:

Հայաստանի ղեկավարությունն անմիջական կապի մեջ է գտնվում Վրաստանի, Հյուսիսային Օսիայի եւ Ռուսաստանի ղեկավարությունների հետ:

Վթարի վայր ժամանած Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարական պատվիրակներն ամեն ինչ անում են, որպեսզի ըստ նախնական ծրագրի երկու շաբաթվա ընթացքում վերանորոգումն արագ ավարտվի:

Պահեստային խողովակով Հայաստան է մտնում մեկ միլիոն խմ գազ, որի ունեցած ճնշումն առայժմ թույլ չի տալիս ստանալ բավականաչափ էլեկտրաէներգիա եւ աշխատացնել հանրապետության արդյունաբերությունը: Պետնախարարի կարծիքով, դժվար է ասել, թե ով է վճարելու վթարի պատճառած վնասների համար, որովհետեւ հետաքննությունը դեռեւս չի պարզել, թե ով է մեղավորը: Իսկ թե ինչպես պետք է Հայաստանն այսուհետ պաշտպանվի նման դիվերսիաներից, այդ հարցը, պրն. Չիտեչյանի մեկնաբանությամբ, պետք է նշվի միջազգային եւ միջպետական պայմանագրերում: Այսինքն, Հայաստանը պետք է դասեր քաղի եւ միջկառավարական պայմանագրերում արձանագրի երկու կողմերի պատասխանատվությունը: Պետնախարարը նշեց նաեւ, որ եթե մինչեւ նոյեմբերի 10-ն ավարտվեն գազատարի վերականգնման աշխատանքները, ապա սկզբունքորեն, ըստ կնքված համաձայնագրերի, 10 միլիոն խմ գազ կարող է մտնել Հայաստան: Թեեւ, պրն. Չիտեչյանի կարծիքով, միշտ չէ, որ այդ պայմանավորվածությունները կատարվում են:

Ծանր վիճակ է նաեւ բենզինի եւ մազութի ապահովման բնագավառում: Խստացվել է պետական հիմնարկներին բենզինի մատակարարումը: Առաջիկա 4 օրվա ընթացքում Հայաստան կմտնի բենզինով բեռնավորված երեք շարասյուն: Հնարավորության դեպքում հանրապետությունը կներմուծի նաեւ մազութ, որովհետեւ եղած պաշարները կբավարարեն մեր պահանջների ընդամենը 20 տոկոսը, իսկ ձմռանը ջեռուցումն ապահովելու համար նախ եւ առաջ կզգացվի մազութի անհրաժեշտություն:

Իսկ որպեսզի ներկա պայմաններում մենք կարողանանք դուրս գալ ստեղծված գերծանր կացությունից, բոլոր նախարարություններին եւ գերատեսչություններին կարգադրված է խստագույն ձեւով սահմանել էներգախնայողություն, անջատել ապօրինի միացումները եւ կարգուկանոն հաստատել վառելիքաէներգետիկ համակարգում:

Երեկ մամուլի ասուլիսից հետո Հայաստանի նախագահը եւ պետնախարար Վ. Չիտեչյանը մեկնեցին Վրաստան՝ աշխատանքային հանդիպումներ ունենալու ԳԽ նախագահ Շեւարդնաձեի եւ վարչապետ Սիգուայի հետ:

Այսօր Լ. Տեր-Պետրոսյանն ու Վ. Չիտեչյանը կմեկնեն Մոսկվա, հանդիպելու Բ. Ելցինի եւ Ն. Գայդարի հետ:

Դ. Ա.

Պատերազմի հետեւանքով ավերվել է ԼՂՀ բնակելի ֆոնդի եւ արդյունաբերական օբյեկտների մի մասը

Մարտունի շրջկենտրոնի բնակելի ֆոնդի կեսից ավելին ավերվել է անընդհատ հրետակոծությունների եւ ռմբակոծությունների հետեւանքով: Գործնականում տուժել են բոլոր արդյունաբերական օբյեկտները: Այդ մասին «Սնարք»-ի թղթակցին հաղորդեց Մարտունիի շրջգործկոմի նախագահի տեղակալ Միխայիլ Հովհաննիսյանը: Նրա խոսքերով, վերականգնողական աշխատանքները հետաձգվում են շինանյութի եւ վառելիքի բացակայության պատճառով: Շրջկենտրոնն առաքվող վառելանյութի միայն 8-10 տոկոսն է բավարարում տեղական ժողտնտեսական համալիրի պահանջները: Դրանով են բացատրվում նաեւ գյուղատնտեսական աշխատանքների դանդաղ տեմպերը, հատկապես աշնանացանը: Ընդ որում, դաշտ է դուրս գալիս աշխատունակ բնակչության 30 տոկոսը, քանի որ մնացածը զորակոչված են Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի շարքերը:

Ինչպես «Սնարք»-ի թղթակցին հաղորդեցին ԼՂՀ Գերագույն խորհրդում, այդպիսի անմխիթար վիճակ է նաեւ Լեռնային Ղարաբաղի այլ շրջաններում: ■

ԼՂՀ մշակութային արժեքները եւ արխիվային փաստաթղթերը պետք է դուրս բերվեն հանրապետությունից

Հայաստանի մշակույթի աշխատողների միության Ղարաբաղի մասնաճյուղի աշխատակիցները հանդես են եկել Ղարաբաղի պատմական արժեքները պատերազմի ոչնչացումից փրկելու նախաձեռնությամբ:

Ինչպես «Սնարք»-ի թղթակցին ասաց ժողովրդական կրթության նախարարության, ԼՂՀ գիտության, մշակույթի եւ սպորտի պատասխանատու աշխատակից Արտո Մարտիրոսյանը, արժեքավոր արխիվային փաստաթղթերի եւ ցուցանմուշների պատճենները, որոնք վերաբերում են Ղարաբաղի պատմությանը, այժմ գտնվում են Երեւանի, Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Թբիլիսիի, արտասահմանյան շատ քաղաքների թանգարաններում: Հայաստանի միջամտությամբ այդ նմուշների մի մասը կարելի էր վերադարձնել Լեռնային Ղարաբաղին:

Այդուհանդերձ, ընդգծել է Մարտիրոսյանը, շրջանի պատմությունը պահպանելու համար հարկավոր է ժամանակավորապես ԼՂՀ տարածքից դուրս բերել արխիվների եւ մշակութալուսավորչական վարչությունների ունեցվածքը: Նա հաղորդել է, որ առաջիկայում հայկական մշակույթի կենտրոնում՝ Շուշիում, պետք է բացել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արխիվային փաստաթղթերի գրադարան: ■

Ղարաբաղի կոմպոզիտորների ստեղծագործական հաշվետվությունը Երեւանում

Այս օրերին Երեւանում տեղի է ունենում նոր հայկական երաժշտության աշնանային փուլը, որի ժամանակ կհնչեն նաեւ Լեռնային Ղարաբաղի կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Ինչպես «Սնարք»-ի թղթակցին ասաց փառատոնի մասնակից, Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի դասախոս Սերգեյ Մարկոսյանը, մայրաքաղաքի բնակիչներին կներկայացվեն խաղաղ քաղաքների ու գյուղերի հրետակոծման եւ ռմբակոծման պայմաններում ստեղծված աշխատանքները:

Նախատեսվում է, որ մոտակա օրերին տեղի կունենա նաեւ բարեգործական համերգ, որն ամբողջությամբ կազմված կլինի Ղարաբաղի վարպետների ստեղծագործություններից:

Իսկ Ղարաբաղի կոմպոզիտորներն *«այժմ զբաղված են անկախության համար մարտնչող երիտասարդ հանրապետության պետական օրհներգը ստեղծելով»*, հաղորդեց Սերգեյ Մարկոսյանը: ■

Արեւմուտքը պետք է ավելի ակտիվ դեր խաղա

Ադրբեջանի վարչապետ Ռահիմ Հուսեյնովը կոչ արեց Արեւմուտքին ավելի ակտիվ դեր ստանձնել ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում: Այդ մասին նա հայտարարեց Մոսկվայում Իտալիայի, Բելգիայի, Շվեդիայի դեսպանների հետ հոկտեմբերի 22-ին տեղի ունեցած հանդիպման ժամանակ, որոնք համատեղության կարգով իրենց պետությունները կներկայացնեն նաեւ Ադրբեջանում: Ընդունելությանը ներկա էր նաեւ Մոսկվայում Հոլանդիայի դեսպանը, որը Բաքու էր ժամանել որպես հյուր: Հուսեյնովը նշեց, թե «Հայաստանի ագրեսիան Ադրբեջանի դեմ եւ չդադարող մարտական գործողություններն արգելակում են հանրապետության տնտեսական զարգացման ընթացքը»: Վարչապետի խոսքերով, հակամարտության դադարեցման դեպքում Ադրբեջանն ի վիճակի է կարճ ժամանակում երեք անգամ ավելացնել նավթի արդյունահանումը եւ հասցնել այն տարեկան 35 միլիոն տոննայի: Վարչապետը տեղեկացրեց դեսպաններին, թե այն բանից հետո, երբ Ադրբեջանը հրաժարվեց մտնել ԱՊՀ կազմի մեջ, Հանրակցությունը ոչ մի ճնշում չի գործադրում հանրապետության վրա: Նա նշեց նաեւ, թե Ռուսաստանը կարող է շատ բան անել հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման համար: Նույն օրը դեսպանները մեկնեցին Մոսկվա: Նախօրեին նրանք հանրապետության նախագահին էին հանձնել իրենց հավատարմագրերը: ■

ԱՄՆ-ում Ադրբեջանի գործերի ժամանակավոր հավատարմատար

Ինչպես հայտնի դարձավ «Թուրան» գործակալությանը, նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի հրամանագրով 32-ամյա քաղաքականագետ Ջեյխուն Մոլլազադեն նշանակվել է ԱՄՆ-ում Ադրբեջանի գործերի ժամանակավոր հավատարմատար: Նա ավարտել է արեւելագիտության ֆակուլտետը արաբերենի ուսուցիչ-թարգմանչի մասնագիտությամբ: Երկու տարի որպես թարգմանիչ աշխատել է Հարավային Եմենում: Նա փիլիսոփայական գիտությունների թեկնածու է, վերջին 4 տարիների ընթացքում զբաղվում է քաղաքականագիտությամբ: «ԱՄՆ-ում ես պիտի զբաղվեմ դեսպանության հիմնադրման հարցերով, ինչպես նաեւ տեղեկացնեմ ամերիկյան հասարակությանը եւ պետական կառույցներին Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձությունների մասին», մեկնելուց առաջ «Թուրանի» թղթակցին ասաց Մոլլազադեն: Անհրաժեշտ է նշել, որ դիվանագիտական ներկայացուցչությունը, որը գտնվում է Վաշինգտոնի ամենահեղինակավոր շրջաններից մեկում, կներկայացնի Ադրբեջանի շահերն ամբողջ ամերիկյան մայրցամաքում: ■

Մեծ Բրիտանիայի ռազմական փորձագետները Ադրբեջանում

Տեսչական նպատակով Բաքու է ժամանել Մեծ Բրիտանիայի ռազմական փորձագետների խումբը: Այն կվերահսկի Ադրբեջանի կառավարության կողմից Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին պայմանագրի իրականացումը:

Փորձագետների այցելության պատճառը Ռուսաստանի պաշտպանության նախարարության պաշտոնական այն հաղորդագրությունն է, ըստ որի Ռուսաստանի 4-րդ բանակն Ադրբեջանին է հանձնել 237 տանկ, ավելի քան 300 զրահամեքենա, 170 հրետանի եւ 130 ականանետ, 33 «Գրադ» կայանք, տասնյակ Ми-24 ուղղաթիռներ, ինչպես նաեւ Су եւ МиГ օդանավեր:

Ինչպես հայտնի է, հունիսի 10-ին Ադրբեջանի Ազգային ժողովը վավերացրել է Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին պայմանագիրը, որի համաձայն Ադրբեջանը կարող է ունենալ միայն 200-ական միավոր տանկ, զրահամեքենա, ծանր հրետանի եւ օդուժ:

Ավելի վաղ պաշտպանության նախարար Ռահիմ Ղազիեւը հերքել էր, որ Ադրբեջանը խախտում է պայմանագրով սահմանված քվոտան: ■

«Ադրբեջանը չի ուզում բացել երկաթգիծն ու գազամուղը»

ասում է Հեյդար Ալիեւը

Թուրքական «Ակթյուել» շաբաթաթերթը հոկտեմբերի 1-ի համարում հոդված է տպագրել, ուր ի հայտ են գալիս Նախիջեւանի Գերագույն խորհրդի նախագահ Հեյդար Ալիեւի եւ Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի միջեւ տարաձայնությունները: Այդ առթիվ թերթն անդրադառնում է նաեւ Թուրքիա-Նախիջեւան-Հայաստան-Ադրբեջան հարաբերություններին:

Հայաստանի եւ նրա նախագահի քաղաքականության հանդեպ որոշ կարծիքներ արտահայտելուց հետո տպագրվել է հարցազրույց Ալիեւի հետ, որը դժգոհում է Էլչիբեյից: Ստորեւ՝ հարցազրույցը:

- Ինչպիսի՞ն է Նախիջեւանի ներկա կացությունը: Լսել ենք, որ մշտապես բախումների մեջ եք Հայաստանի հետ եւ մոտալուտ ձմռանը սննդի եւ վառելիքի նեղություն եք ունենալու:

- Հայերի հետ պարբերաբար բախումների մեջ ենք: Դրանց վերջ տալու համար տեսակցել ենք Հայաստանի խորհրդարանի նախագահի հետ: Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ երկաթգիծը 5 ամիս է չի գործում: Այդ պատճառով էլ Նախիջեւանի տնտեսական վիճակը խիստ ծանր է:

- Նախիջեւանում հնարավո՞ր է սնունդ գտնել:

- Չկա, ոչինչ հնարավոր չէ գտնել: Թուրքիայի Կարմիր մահիկից խնդրել ենք, որ ցորեն ուղարկեն: Բենզին էլ չունենք: Էլեկտրականություն չկա, քանի որ այն գալիս է Ադրբեջանից Հայաստանի վրայով: Նախիջեւանն էլեկտրականությամբ ապահովված է ընդամենը 20 տոկոսով:

- Հայաստանից պահանջե՞լ եք արդյոք, որ երկաթուղին բացի:

- Հայաստանը վաղուց է պատրաստ բացելու, սակայն ադրբեջանական կողմը հակառակ է դրան:

- Ադրբեջա՞նն է մեղավոր:

- Այո, Ադրբեջանի ղեկավարները չեն ուզում բացել:

- Ինչո՞ւ:

- Իրենց հարցրեք պատճառը: Գնացեք եւ ձեր սիրելի Ադրբեջանի ղեկավարներին հարցրեք: Արդարացումն այն է, թե Հայաստանը պետք է դուրս գա Ղարաբաղից: 5 տարի է Հայաստանը դուրս չի գալիս Ղարաբաղից, եւ մեր 350 հազար բնակիչները տուժում են դրանից:

- Ադրբեջանը տեղյա՞կ է ձեր դիրքորոշմանը: Էլչիբեյն ինչպե՞ս արձագանքեց:

- Զանգեցի, բացատրեցի, բայց չգիտեմ, տեղ հասա՞վ: Կասկածում եմ:

- Ներկայումս Ադրբեջանի ինքնավար կազմավորում եք: Ադրբեջանից անջատվելու մտադրություն ունե՞ք:

- Այդպիսի բան չկա: Ադրբեջանցիներն են այդպիսի պնդումներ առաջ քաշել: Նախիջեւանը լավ հարաբերություններ ունի Թուրքիայի հետ, ուզում է միանալ նրան, ասում էին ոմանք: Պնդում էին, թե Հեյդար Ալիեւն ուզում է Նախիջեւանն անջատել Ադրբեջանից եւ միացնել Թուրքիային: Սրանք սխալ պնդումներ են: ■

Գործադուլ ադրբեջանական բուհում

Ադրբեջանի օտար լեզուների ինստիտուտում անկախ աշխատավորների «Թուրան» միության եւ ԱԺՃ-ի անդամները, ինչպես նաեւ ոչ մի քաղաքական հոսանքի չպատկանող մի շարք դասախոսներ եւ ուսանողներ պահանջել են ռեկտոր Ջեմֆիրա Վերդիեւայի հրաժարականը, որն արդեն 19 տարի ղեկավարում է ինստիտուտը: Ստեղծվել է գործադուլային կոմիտե: Ռեկտորին մեղադրում են պաշտոնը շահադիտական նպատակներով օգտագործելու մեջ: Ինքը՝ Վերդիեւան հերքում է նմանատիպ հայտարարությունները: Նրան պաշտպանում են ինստիտուտի կոլեկտիվի մի մասը, ինչպես նաեւ Ադրբեջանի կանանց կոմիտեի ներկայացուցիչները, որի նախագահը նույնպես Վերդիեւան է: ■

Ռահիմ Ղազիեւը Մոսկվայում

Ադրբեջանի պաշտպանության նախարարը Մոսկվա է ժամանել «սովորական աշխատանքային խորհրդակցություններ» վարելու նպատակով: Այդ մասին «ԻՖ»-ին հաղորդեց Մոսկվայում Ադրբեջանի լիազոր ներկայացուցչի տեղակալ Ռաֆայել Հուսեյնովը: Նրա խոսքերով, ոչ մի բանակցություն, այդ թվում Հայաստանի ներկայացուցչի մասնակցությամբ, չի նախատեսվում: Ռ. Հուսեյնովը հաղորդեց, որ հոկտեմբերի 22-ին Ռ. Ղազիեւը հանդիպում է ունեցել Ռուսաստանի պաշտպանության նախարարության ղեկավարության հետ: Սակայն կոնկրետ ո՞ւմ հետ, հայտնի չէ: Ինչպես «ԻՖ»-ին հաղորդեցին Ռուսաստանի պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունում, Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովը պատրաստ է հանդիպել ինչպես Ադրբեջանի, այնպես էլ, Հայաստանի գործընկերների հետ, երբ նրանք դիմեն այդպիսի նախաձեռնությամբ: ■

Ոչ պետական բուհերը խորթ զավակի դերում

Դեռեւս խորհրդային կարգերի ժամանակ, երբ ուժի մեջ մտավ կոոպերացիայի մասին օրենքը, Երեւանում ստեղծվեց առաջին «մասնավոր» բուհը: Երեւույթը բավականին անսովոր էր, եւ շատերն էին այն կարծիքին, որ այն պարզապես ապագա չունի: Սակայն որոշ ժամանակ անց ակնհայտ դարձավ՝ կոոպերատիվ ինստիտուտները թեեւ վճարովի են, բայց մեծ պահանջարկ են վայելում. այսօր արդեն պաշտոնապես գրանցված ոչ պետական բուհերի քանակը հասել է 17-ի, որոնք կառավարության կողմից արտոնագրված մոտ 40 մասնագիտությունների գծով կադրեր են պատրաստում:

Ո՞րն է «մասնավորի»՝ նման հաջողության գաղտնիքը: Մեր ուսումնասիրությունների համաձայն, դրանք հիմնականում երկուսն են. նախ այն գումարները, որոնք պահանջում են այդ ինստիտուտները, անհամեմատ քիչ են պետական բուհերի կողմից «գաղտնի» գանձվող արժեքից, եւ երկրորդ՝ այստեղ ուսանողներին գիտելիք տալու հարցում շատ ավելի մեծ շահագրգռվածություն կա:

Պատահակա՞ն է արդյոք, որ կառավարության համապատասխան մարմինները եւ պետական ինստիտուտների ռեկտորները առիթը բաց չեն թողնում պարսավելու իրենց «գործընկերներին», իսկ պետական ուղիներով արագորեն աճող «մասնավորի» առջեւ «անվերջ» խոչընդոտներ են հարուցվում:

Այսպես, պարզ չէ, թե ինչպիսի արտադրանքի համար են ոչ պետական բուհերից ավելացված արժեքի հարկ գանձում, որն անլուծելի խնդիրներ է առաջադրել անգամ լայն սպառման ապրանքներ շուկա հանող հիմնարկ-ձեռնարկություններին: Անհասկանալի է նաեւ, թե ինչո՞ւ այս կամ այն մասնագիտությունն արտոնագրելու համար ընդունելության խստագույն լիմիտ է սահմանվում: Գուցե դրանով պետությունը շուկայական տնտեսության համար անհրաժեշտ մասնագետների հարցում քանակական հավասարակշռությո՞ւն է ձգտում: Այդ դեպքում անհայտ է, թե ապագան կանխատեսող ինչ կողմնորոշիչներով են նրանք առաջնորդվում եւ ամենակարեւորը, նման խնդիրներով մտահոգված կառավարությունն ինչպես է կարողանում գրչի մի հարվածով տարեցտարի ավելացնել պետական բուհերի ընդունելության տեղերը:

Այս հարցում վերջին հայտնագործությունը դարձավ ՀՀ կառավարության սեպտեմբերի 24-ի թիվ 486 որոշումը, համաձայն որի «մասնավոր» բուհերի ուսանողները բանակ են զորակոչվում:

Ինչ խոսք, երբ հայրենիքը վտանգի մեջ է, բոլորս պետք է զենք վերցնենք: Սակայն արդյոք այս հանգամա՞նքն էր հաշվի առել կառավարությունը նման որոշում կայացնելիս: Այդ դեպքում ինչո՞ւ չեն զինակոչվում պետական բուհերի ուսանողները:

Բացի այդ, ամենեւին էլ գաղտնիք չէ, որ տարիներ շարունակ լայնածավալ զինակոչ չանցկացրած եւ ազգային բանակի ձեւավորման փուլում գտնվող մեր հանրապետությունը շատ ավելի քիչ զինվորների կարիք ունի, քան կարող է «հավաքել»:

Պետնախարար Գրիգոր Արեշյանի հետ զրույցից պարզվեց, որ պատճառները շատ ավելի «լուրջ» են. այդ բուհերը դեռ հավատարմագրված չեն, հետեւաբար իրենց կարգավիճակով ցածր են պետական բուհերից: Այստեղից էլ եզրակացությունը՝ նրանց ուսանողների վրա չի կարող տարածվել բուհերի սովորողներին զինակոչից ազատելու կարգը:

Ինչ փույթ, թե պետության կողմից արտոնագրեր ստացած «ոչ լիարժեք» ինստիտուտներն այդ որոշումից հետո լուրջ խնդիրների առջեւ են կանգնել՝ տարկետո՞ւմ ձեւակերպել այդ ուսանողներին, թե՞ չեղյալ համարել կնքված պայմանագրերը, ինչպե՞ս վարվել ազատված տեղերի հետ, նոր ընդունելությո՞ւն հայտարարել...

Նման իրավիճակում անշուշտ մխիթարություն պետք է համարել, որ պրն. Արեշյանն արդեն համապատասխան նախարարություններին հանձնարարական է իջեցրել մշակելու բուհերի հավատարմագրման կարգը եւ չափանիշները: Նրա խոսքերով, դրանք պատրաստ կլինեն այս տարվա նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին: Հարց է առաջանում, իսկ հավատարմագրվելուց հետո վերջնականապես բոլոր ինստիտուտներն իրենց իրավունքներով կհավասարվե՞ն: Համենայն դեպս, այդ կարծիքին էր ՀՀ պետնախարարը:

ՅՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆ

Կենցաղային ծառայությունների գներն աճում են

Գների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կենցաղային ծառայությունների գները զգալիորեն աճել են: Այսպես, 1992 թ. առաջին եռամսյակում կոշիկի վերանորոգման միջին գները կազմում են 14 ռուբլի կամ անցյալ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել են 7,4 անգամ, հեռուստացույցների եւ ռադիոսարքավորումների վերանորոգման գինը կազմում է 300 ռուբլի կամ աճել է 10,8 անգամ, սառնարաններինը՝ 550 ռուբլի կամ 13,1 անգամ, լվացքատների ծառայությունների արժեքը՝ 2 ռուբլի կամ 5,8 անգամ, նկարչատների ծառայությունների արժեքը՝ 65 ռուբլի կամ 10,1 անգամ, ծիսական ծառայությունների արժեքը՝ 144 ռուբլի կամ 6,6 անգամ եւ այլն:

Չափազանց բարձր գների, էներգետիկ ճգնաժամի, անբավարար նյութատեխնիկական ապահովման պատճառով շատ քիչ մարդիկ են օգտվում կենցաղային ծառայություններից:

1992 թ. առաջին եռամսյակում հանրապետությունում սեփականաշնորհվել է կենցաղային սպասարկման 18 օբյեկտ՝ 5 միլիոն 980,9 հազար ռուբլի ընդհանուր գումարով: Մեկ օբյեկտի վաճառման միջին արժեքը կազմել է 332,3 հազար ռուբլի: ■

Արտաքսված առեւտուր

Ստեփանակերտի «Վարանդա» արտադրական-կոմերցիոն կոոպերատիվն ստիպված է իր գործունեությունը ծավալել Լեռնային Ղարաբաղից դուրս:

«Մենք զբաղվում ենք ԼՂՀ ձեռնարկությունների եւ կազմակերպությունների նյութատեխնիկական ապահովմամբ», «Սնարկ»-ի թղթակցի հետ զրույցի ժամանակ ասաց կոոպերատիվի վարչության անդամ Սերգեյ Յարությունյանը: Սակայն երկաթուղային շրջափակումն ու պատերազմն ի չիք են դարձնում մեր ջանքերը եւ հնարավորություն չեն տալիս իրականացնել կնքված պայմանագրերը: Չսնանկանալու նպատակով կոոպերատիվը հարկադրաբար անցել է միջնորդական գործունեության ԱՊՀ այլ շրջաններում: Ընդ որում, եկամտի զգալի մասը մենք ուղարկում ենք Ղարաբաղ, այդ թվում՝ ինքնապաշտպանության ուժերի կարիքների համար»:

Յարությունյանի խոսքերով, միայն այս տարի կոոպերատիվը մտադիր է 2 միլիոն ռուբլու ֆինանսական օգնություն ցուցաբերել Ղարաբաղին: ■

Փառահամար

Գերեզմանային շինարարությունն ընդդեմ բնակարանային շինարարության

Մեր գերեզմանատներ մտնողն առաջին հերթին կհամոզվի, որ Հայաստանն իրոք թանգարա՞ն է բաց երկնքի տակ: Որքան էլ դաժան հնչի, բայց... Նա կսկսի իրեն զգալ տեսարժան վայրում ու կմտածի, որ այստեղ մարդիկ հաճախ ժամանցի են հավաքվում: Յետո կարող է ենթադրել, թե շինանյութը մեզ մոտ շատ էժան է: Եւ այդ ամենը հանձինս ու շնորհիվ գերեզմանատների հուշարձանների, դամբարանների ու մյուս կառույցների: Դաժան զավեշտ է, զարհուրելի, միաժամանակ նաեւ զայրացուցիչ...

Զարմացնո՞ւմ ենք, ա՞չք ենք շլացնում՝ հանգուցյալի թաղումը վերածելով մահվան տոնահանդեսի: Կարծես բոլորս սպասում ենք մահվան գալստյանը, որ միանգամից մեր «բուռն սերն ու նվիրվածությունը» հանգուցյալին ի ցույց դնենք: Թող ոչ ոք չփորձի բացատրել, թե այդ ամենը մեռնողի նկատմամբ ունեցած իր համակրանքից, հարգանքից, սիրուց ու մնացած այլ զգացմունքներից է: Եւ ոչ թե մնացածներից ավելի վատի, չունեւորի, հարազատի մասին չմտածողի անուն վաստակելու սարսափից, այսինքն՝ փառքի իր բաժինը ձեռք գցելու առիթը բաց չթողնելու ցանկությունից: Իբրեւ հաստատումն այն բանի, որ լավ է աչքը դուրս գա, քան անունը:

Իսկ փառահամարը շարունակվում է...

Գյումրի քաղաքին հարող «Նորակառույց» գերեզմանատանը հանգուցյալների հիշատակին կառուցված հուշարձանները, «հուշատնակները», որոնց վրա այնքան աշխատանք ու շինանյութ է ծախսվել, ավելի շատ խոսում են ոչ թե այդ ամենը անողի նվիրվածության ու մարդասիրության, այլ ինքնացուցադրման ու փառասիրության մասին, անպտուղ, սին փառասիրության: Քանզի այդ նույն միջոցները, ժամանակը, եռանդը նա կարող էր ծախսել կենդանի մնացած մարդկանց համար բնակարան կառուցելու վրա, որի կարիքը հազարավոր մարդիկ են զգում հենց Գյումրիում: Ինչքա՞ն բնակարան ու մանկապարտեզ կարելի է արարել այն «չճարվող» շինանյութով, որով «շենացնում են» գերեզմանատները: Այս պատկերը նույնն է ցանկացած գերեզմանատանը՝ արձաններ, տարբեր նյութերով ու նախագծերով կառուցված ու անավարտ շինություններ: Ոչ մի տեղ, ոչ մի ժողովուրդ, այն էլ նման վիճակում գտնվող, իրեն այսպիսի շռայլություն թույլ չի տալիս: Ու բնավ էլ պատճառն այն չէ, թե ուրիշ տեղ ավելի քիչ են ցավում մարդկային կորստյան համար կամ էլ փառասիրություն չունեն:

Յանրապետության բնակարանային շինարարության զարկերակը մահամերձի զարկերակի նման է բաբախում: Շինանյութ չկա, միջոց չկա: Յազարավոր ընտանիքներ սպասում են բաղձալի օրվան: Իսկ դրա կողքին տասնյակ, հարյուր հազարներ են կորչում գերեզմանոցային կառույցների ու դրանց սիրահարների «ստեղծագործությունների» վրա:

Սեփական ցանկությամբ մարդ չի կարող տուն կառուցել, եթե միջոց չունի: Իսկ սեփական ցանկությանը հակառակ կարող է մահարձան, դամբարան կառուցել, եթե նույնիսկ ինքը միջոց չունի: Որովհետեւ այդ է պահանջում սովորությունը, մյուսներից հետ չմնալու տենչը, մարդկանց մոտ սեւերես մնալու տագնապը...

Մարդասիրության քողով ծածկված այս «ներկայացումը» իր ներքին անմարդկայնությամբ, իր կեղծությամբ ու ցուցամոլությամբ հանդերձ ներշնչել է մի ողջ ժողովրդի, թե դա բնական է, թե ուրիշ ազգերի համեստ խաչերն ու տապանաքարերը նրանց զգացմունքային սառության մասին են խոսում, իսկ մե՞նք... չէ՞ որ մենք հա՜յ ենք, մեզ հակառակը պատշաճ չէ..., մեզ համար մեր հարազատները միշտ էլ թանկ են, թեկուզ միայն մահից հետո...

ԳԱԳԻԿ ՆԱՅԱՊԵՏՅԱՆ

Թափոնները թանկարժեք հումք

Հայաստանում կոշիկի գործող 20 ֆաբրիկա կա եւ բազմաթիվ կոոպերատիվներ ու անհատ արտադրողներ: Կոշիկը մեր հիմնական արտադրանքներից մեկն է: Սակայն եթե բարձրորակ կոշիկի արտադրության համար ունենք մեծաթիվ մասնագետներ, ապա չունենք համապատասխան հումք: Կոշիկի արտադրության համար անհրաժեշտ ամեն ինչ ներմուծվում է դրսից: Իսկ մեր ունեցած ճանապարհների դեպքում դա այնքան էլ հեշտ չէ: Թանկարժեք հումքը գումարելով թանկ ճանապարհածախսին, ստացվում է թանկ կոշիկ: Սակայն այդ հումքի մի մասը կարելի է հաջողությամբ ստանալ տեղում: Դրանք կոշիկի ներքին մասերն են՝ սկսած կաղապարից, կոշիկի ստվարաթղթե դետալներից՝ քթակալ, ներբան, հետեւամաս եւ այլն: Սրանք բոլորը կարելի է ստանալ անհամեմատ էժան, էկոլոգիապես մաքուր ճանապարհով, օգտագործելով միայն թափոններ ու լաթեր: Որպես հումք օգտագործվում են կաշվի, տեքստիլ, փայտամշակման թափոնները, անգամ աշնանային չոր տերեւները:

Ստացված «Հայաստան» կոչվող արհեստական կաշին ապշեցուցիչ հատկություններ ու տարատեսակներ ունի: Այն, ինչ այսօր դեն է նետվում՝ կաշվի փոշին, թեփը, ստվարաթղթի կտորտանքը, տեքստիլ արտադրության թափոնները, կամ այրվում՝ մթնոլորտն աղտոտելով, կարող է օգտագործվել: Կաշվի, կոշիկի, տեքստիլ արդյունաբերության գործարաններում օգտագործելով այս տեխնոլոգիան, կարելի է կազմակերպել միանգամայն անթափոն արտադրություն: Ստացված արտադրանքը կարող է ոչ միայն օգտագործվել կոշիկի արտադրության մեջ, այլեւ չափազանց մեծ ներդրում գտնել: Այս սկզբունքով կարելի է արտադրել երեսպատման սալիկներ, շինարարության մեջ օգտագործվող ջերմամեկուսիչ թիթեղներ, պաստառներ (բոլոր նմուշները կան): Տեխնոլոգիան բարդ չէ, անհրաժեշտ որոշ մեքենաներ կան, մյուսներն էլ դժվար չէ ձեռք բերել: Բացի այս, կլուծվի նաեւ մեկ այլ՝ նույնպես շատ կարեւոր խնդիր՝ նոր աշխատատեղերի ստեղծման հարցը:

Գյուտի 80-ամյա հեղինակը, որն ստացել է մի քանի հեղինակային իրավունքներ, չցանկացավ, որ իր անունը հրապարակվի (թեեւ գուցե շատերին է ծանոթ, թերթերը ժամանակին գրել են): Հեղինակի հաշվարկներով, միայն կոշիկի ներքին մասերի՝ Հայաստանում առկա պահանջարկը բավարարելու համար անհրաժեշտ է կազմակերպել արտադրություն, որտեղ զբաղված կլինեն շուրջ 30 հազար մարդ: Տեխնոլոգիան մեծ հետաքրքրություն է առաջացրել բնության եւ շրջակա միջավայրի պահպանության նախարարությունում: Նախարարության բնապահպանության ստրատեգիայի բաժնի պետ Ռազմիկ Պետրոսյանը գտնում է, որ նման արտադրության կազմակերպմամբ կշահի եւ բնությունը, եւ արտադրությունը:

Սույն հրապարակմամբ մեր նպատակն է դրսում դժվարությամբ հումք հայթայթողներին, գործազրկության պրոբլեմներով զբաղվողներին եւ այլ շահագրգիռ անձանց ուշադրությունը հրավիրել այս մեթոդի վրա: Հետաքրքրվողները կարող են ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ խմբագրությունում:

ԱՐՄԻՆԵ ՕՅԱՆՅԱՆ

Կրասնոդարում ստեղծվել է հայերի միություն

Կրասնոդարում ստեղծվել է Ռուսաստանի հայերի միություն: Այն ստեղծվել է Ռուսաստանի Դաշնության հայկական համայնքների հոկտեմբերի 18-ին կայացած համաժողովում:

Համաժողովին մասնակցել են Ռուսաստանի հայկական համայնքների մոտ 100 պատվիրակություններ: Նոր կազմակերպության նպատակն է նպաստել միասնական Ռուսաստանի խաղաղությանը եւ բարգավաճմանը: Նաեւ հատուկ հայտարարվել է, որ հայերը տարածքային ոչ մի պահանջներ չունեն: ■

Մեծարման հանդիսություն Կամերային երաժշտության տանը

Կամերային երաժշտության տանը հոկտեմբերի 22-ին «Զորավար Անդրանիկ» Հայոց համազգային միությունը կազմակերպել էր Հայրենական պատերազմի եւ աշխատանքի վետերան, Բրեստի պաշտպանության մասնակից Սամվել Մաթեւոսյանի մեծարման հանդիսությունը՝ ծննդյան 80-ամյակի կապակցությամբ: Մեծարման խոսքեր ասացին գրող Գեւորգ Դեւրիկյանը, մարտական եւ աշխատանքային ընկերները, [illegible] վարչության պետ Ռոբերտ Կարապետյանը, որը [illegible] հանձնեց հոբելյարին [illegible]:

[illegible]

Երբ մարդկանց կյանքն ի զորու չենք բարելավել, գոնե չպետք է մոռանանք նրանց հարգել ու մեծարել, ասաց [illegible]: Հոբելյարը հոկտեմբերի 22-ն անվանեց իր 80-ամյա կյանքի ամենաերջանիկ օրը: ■


Ի՞նչ Արտախ, այ կնիկ, գործից է, տանը պետք կգա...

Արտաքին գործեր, ներքին հարցեր

Րաֆֆի Յովհաննէսեանի հրաժարման առթիւ

Բնականաբար, Րաֆֆի Յովհաննիսյանի հրաժարականի փաստն անտարբեր չթողեց նաեւ սփյուռքահայ քաղաքական շրջանակները, մամուլը: Արդեն իսկ ուրվագծվում են այնտեղ, ինչպես մեզ մոտ, պարագան կուսակցականացնելու, իր բուն նշանակությունից դուրս բերելու, նրան մեծ համեմատություններ տալու միտումներ, որոնք սպառնում են ի վերջո զրկել մեզ հարցն ըստ էության քննելու եւ պետական կառույցների կատարման ընթացքում առկա թերությունները մատնանշելու եւ սրբագրելու հնարավորությունից: Այս իմաստով առողջ եւ սթափ գնահատականի օրինակ է տալիս ՌԱԿ-ի Բոստոնի պաշտոնաթերթը խմբագրական հետեւյալ հոդվածով:

Անկախ Հայաստանի Հանրապետութեան առաջին արտաքին գործոց նախարար Րաֆֆի Յովհաննէսեանի հրաժարականը,՝որքան ալ դուռներու շրխկոցով տեղի ունեցաւ, զարմանք չպատճառեց ոչ մէկուն: Կարելի է նոյնիսկ ըսել, որ վերջին շաբաթներուն ամէն ոք կը սպասէր միակողմանի կամ երկկողմանի նման ամուսնալուծման մը, Պոլսոյ եւ Նիւ Եորքի մէջ պրն. Յովհաննէսեանի յայտարարութիւններէն ետք, որոնք հնչեցին որպէս դիւանագիտական սխալ նօթեր:

Նոյնիսկ կարելի է հարց տալ, թէ ի՞նչ կը հետապնդէր Հայաստանի արտաքին գործոց նախարարը նման, սխալ տեղ սխալ ժամանակ կատարած յայտարարութիւններով. ծառայե՞լ այն առաքելութեան, որուն համար պաշտօնի կոչուած էր ան, թէ քիչ մը եւս շփոթ յառաջացնել առանց անոր ալ խառնակ կացութեան մէջ: Այլ խօսքով, յայտարարութիւնները ուղղուած էին դուրսի՞ աշխարհին, թէ առաւելաբար ներսի շուկային:

Երբ սովի դուռը հասած հանրապետութիւն մը հարկադրուած կը զգայ հարիւր հազար թոն ցորեն խնդրելու, հոգ չէ թէ «փոխատուութեան» պայմանով, դրացի մը, որուն հետ ունի պատմական-քաղաքական ծանրակշիռ ամբաստանութիւններով պայթուցիկ թղթածրար մը (որ նոյնիսկ չի յանդգնիր բանալ փորձել կանխելու համար անժամանակ պայթիւն մը), արտաքին գործոց նախարար մը պարտի այդ դրացիին հանդէպ գործածել խնայողական լեզու, առնուազն մինչեւ տագնապին աւարտը: Իսկ երբ այդ նախարարը կը գտնուի այն երկրին մէջ, որուն քաղաքացին ըլլալէ չէ դադրած եւ որ սակայն պաշտօնական այցով հոն կը ներկայացնէ օտար հանրապետութիւն մը, առնուազն կը զգուշանայ այցելած երկրին ներքին գործերուն միջամուխ ըլլալէ: Ամերիկեան քաղաքացի ու Հայաստանի նախարար Յովհաննէսեանի մէջ շփոթութիւն մը զգալի է, այս պարագային:

Ամէն պարագայի, վերջին շրջանին ամէն անգամ որ նախարար Յովհաննէսեան նման անտեղիօրէն յախուռն արտայայտութիւններ կ'ունենար, նախագահ Տէր-Պետրոսեան որ մէկ խորհրդականին կամ մամլոյ քարտուղարին բերնով կը յայտարարէր, թէ Յովհաննէսեանի «քիչ մը զգացմունքային» արտայայտութիւնները չէին ցոլացներ Հայաստանի պետութեան պաշտօնական քաղաքականութիւնը:

Հայաստանի Հանրապետութեան արտաքին յարաբերութիւնները ճշդողն է, համաձայն «Հանրապետութեան նախագահի մասին օրէնք»ին, նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանն: Ան է գերագոյն պատասխանատուն, այդ քաղաքականութեան յաջողութեան թէ ձախողութեան պարագաներուն: Արտաքին գործոց նախարարի մը առաքելութիւնը կը կայանայ իր տաղանդը եւ անձնական ոճը ի սպաս դնել գծուած քաղաքականութեան յաջողութիւնը ապահովելու դիւանագիտական միջոցներով: Նախարար մը իրաւունք ունի համաձայն չըլլալու ճշդուած վարքագծին, առանց որ ան ազդէ իր գործունէութեան վրայ: Հակառակ պարագային, երբ տարակարծութիւնները սրին քաղաքականութիւնը ճշդողին եւ զայն վարողին միջեւ, նախարարը կը ներկայացնէ իր հրաժարականը առանց խնդրանքի սպասելու: Րաֆֆի Յովհաննէսեան սպասեց այդ խնդրանքին (կամ պահանջին):

Այսուհանդերձ ամէն ինչ այնքան ալ պարզ ու յստակ չ'երեւիր, երբ այս կարգի հարց մը կը վերաբերի Հայաստանի նման նորակազմ պետութեան մը, որ իր վտիտ ոտքերով միջազգային գետնի վրայ (կ'առնէ իր առաջին քայլերը: Խնդիրը միայն կազմին տկարութեան չի վերաբերիր, դժբախտաբար, այլ վարչական որոշ դրութեան մը կ'ակնարկենք արտաքին գործոց նախարարութեան) որ աճումը դժուար է, երկարատեւ եւ ցաւագին, երբ սակայն Հայաստան պերճանքը չունի մսխելու ժամանակ, միջոց եւ փախցնելու բախտորոշ առիթներ:

Այս վրդովեցնող կացութեան մասին որոշ գաղափար մը կուտայ «Ազգ»ի մէջ լոյս տեսած եւ «Պայքար»ի մէջ արտատպուած Յակոբ Ասատրեանի վաւերական յօդուածը Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մէջ տիրող կացութեան մասին, որուն համար կարելի չէ մեղադրել Րաֆֆի Յովհաննէսեանը, գոնէ ոչ միայն զինք, այլ կարելի է թերացումները, սխալները եւ պատասխանատուութեան բաժինները ճիւղաւորել, տարածել եւ մագլցումով բարձրանալ մինչեւ հանրապետութեան գերագոյն ղեկավարութիւնը:

Եթէ նոյնիսկ պահ մը ենթադրենք, որ Յակոբ Ասատրեանի մատնանշած իրողութիւններուն միայն կէսը ճիշդ է, այդ հաւանականութիւնն իսկ մեր մէջ կը յառաջացնէ խռովք մը, որ վստահութիւն չի ներշնչեր: Առանց որ արտաքին գործոց նախարարութեան մեքենականութիւնը ստեղծուի, բաժանմունքին մէջ եւ շուրջը տիրական երեւոյթ է անձնական մրցակցութիւնները, թերացումները, փոխադարձ անվստահութիւնը, յանպատրաստից գործելակերպը՝ աշխատանքի ընդհանուր համակարգումի չգոյութեան առընթեր:

Ու հոս կ'երեւի մեդալին միւս կողմը, որ յստակ է ի մասնաւորի նախագահական վարչակարգերուն:

Նման դրութեան մը մէջ միշտ վտանգը կայ, որ երկրի մը նախագահը իր ձեռքին մէջ կուտակէ ուժեր, զորս պիտի սեղմելու պարագային պիտի ամբաստանուի բռնապետութեամբ, իսկ թուլցնելու պարագային դուռ պիտի բանայ անիշխանութեան կամ անընդունելի օրինազանցութիւններու:

Նման պայմաններուն մէջ առնուազն երկու կարեւոր մարմիններու ներկայութիւնը անհրաժեշտ կը դառնայ, որ նախագահական իրաւասութիւնները վերածուին կենսատու ուժի եւ դրական ներհզօր արարքներու, առանց երբեք վտանգելու ժողովուրդին ապահովութիւնը եւ ժողովրդավարական կարգերը:

Առաջին հերթին, վարչութեան մէջ անհրաժեշտ է որ ստեղծուի զիրար ներդաշնակող, համապատասխանող եւ լրացնող մարմիններու համագործակցական սերտ համակարգ մը, որպէսզի միասնաբար առաջքը առնուին անհատական թէ խմբական սայթաքումներու, սխալներու եւ ենթակայական արարքներու եւ խօսքերու: Նման մարմնի մը տեղեկագրին վրայ է միայն, որ երկրի մը նախագահը կրնայ քաղաքականօրէն ճիշդ դիրքորոշուիլ: Երկրորդ եւ կարեւորագոյն ազդակն է Գերագոյն խորհուրդը եւ անոր արտաքին գործերու յանձնաժողովը, որ նաեւ հսկող մարմին է: Կը թուի թէ պրն. Դաւիթ Վարդանեանի նախագահած վերոյիշեալ յանձնաժողովը դատապարտուած է անգործութեան: Այս հարցին բնականօրէն կը յաջորդէ հիմնականը, որպէսզի գործադիր եւ սահմանադիր մարմինները, առանց մոռնալու դատականը, ճշգրիտ կերպով իրազեկ ըլլան իրենց իրաւունքներուն եւ պարտաւորութիւններուն, եւ որպէսզի ժողովրդավարութիւնը տիրէ իր կարգ ու սարքով:

Պրն. Րաֆֆի Յովհաննէսեան պաշտօնավարեց տասը ամիս: Հաւանաբար ան տուաւ իր առաւելագոյնը՝ արտաքին յարաբերութիւններուն, ինչպէս նաեւ իր նախարարութեան կազմակերպման աշխատանքին մէջ: Ան բրաւ իր կարելին տուեալ պայմաններուն մէջ, առանց մոռնալու, որ ասպարէզով իրաւաբան այս երիտասարդը դիւանագիտական փորձառութիւն չունէր: Սակայն ասիկա այլ հարց է:

Պաշտօնէն հրաժարումին առթիւ իր գրաւոր յայտարարութեան մէջ Րաֆֆի Յովհաննէսեան կ'ըսէ, թէ կը հեռանայ *«անաւարտ աշխատանքի զգացումով (...) եւ այնքան ժամանակ, որ մեր պայքարը դեռ կիսատ է, ես կը մնամ հայ ժողովուրդի մշտական ծառայութեան մէջ»:*

Նախագահ Տէր-Պետրոսեան իր նախկին նախարարին առաջարկած է իրեն խորհրդականի պաշտօնը: Դեռեւս չենք գիտեր ենթակային պատասխանը: Սակայն ինչ որ ալ ըլլայ ան, կ'ուզենք յուսալ, որ Յովհաննէսեան պիտի մնայ իր ժողովուրդի մշտական ծառայութեան մէջ, միշտ դրական դիրքերու վրայ, օգտագործելով իր փորձառութիւնը, որովհետեւ եթէ ան իր պաշտօնավարութեան շրջանին կարգ մը նախանձներ գրգռեց կամ դժգոհութիւններ յառաջացուց, իր հեռացումովը ուրախացուց շատ մը անձեր, ո՛չ նոյները. եւ որոնք կ'ակնկալեն կուսակցական իրենց պատուասկին մէջ զայն գործածել որպէս կշիռ ունեցող քար մը: Ախորժակներ սկսած են սրիլ այդ ուղղութեամբ:

Կ'ուզենք հաւատալ, թէ այն սկզբունքները, որոնց ուխտեց ան «հաւատարիմ մնալ», պիտի ծառայեն նաեւ զինք հեռու պահելու շահագործման առարկայ դառնալէ: Այդ կը պահանջէ նաեւ հայրենիքին գերագոյն շահը:

«Պայքար» շաբաթաթերթ
10 հոկտեմբերի, 1992 թ.

Զի մի է ձեր Ուսուցիչ՝ Քրիստոս

Տաս յարգելի Աբրահամ վարդապետ Մկրտչեանը «Ազգ»ում (92, 105)» «Վասն անգիտաց» յօդուածի մէջ ինձ առաջարկում է հետեւել քրիստոնէական երկիւղածութեանը»: Ընդունում եմ: Միաժամանակ ինքը՝ մեծարգոյ վարդապետը նուաստիս եւ նրա մի յօդուածի («Լուսաւորիչ» 92 թ. 24) հասցէին գործածում է այսպիսի պիտակներ՝ «խեղաթիւրող», «մտացածին», «չքմեղանքով», «յաւակնոտ», «անհիմն», «յանդգնութիւն» եւ այլն: Վերնագրում ինձ անուանում է անգէտ: Արդեօք այսպիսի՞ն է լինում քրիստոնէական երկիւղածութիւնը: Եւ արդեօք մեր եկեղեցու հոգեւոր ծառաները չէ՞, որ մեզ՝ աշխարհականներիս օրինակ պէտք է տան իրենց կեանքում կիրառելով Յիսուսի պատուիրանը. «Մի՛ դատէք, զի մի դատիցիք: Զի որով դատաստանաւ դատիք, դատելոց էք. եւ որով չափով չափէք, չափեսցի ձեզ: Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո, եւ ի քում ական զգերանդ ոչ տեսանես» (Մատթ. 7. 1-4):

Վերոյիշեալ յօդուածումս փորձել էի ներկայացնել, թէ ինչպէս եմ ընկալում մեր ամենօրեայ աղօթքը, եւ որ իմ պատկերացմամբ Հայր մեր-ը Քրիստոսի աստուածային սիրոյ մի արտայայտութիւնն է: Յարգարժան վարդապետը իմ այդ ընկալումը սխալ, մտացածին, աղաւաղեալ է յայտարարում եւ պահանջում է կարդալ միջնադարում այդ աղօթքին տրուած մեկնաբանութիւնները ու առաջնորդուել դրանցով: Անհասկանալի է: Ուրեմն ի՞նչ, մի՞թէ զուտ Աւետարանով՝ առաջնորդուելը մեղք է, մի՞թէ անհրաժեշտ է միջնադարեան մեկնութիւններով առաջնորդուել: Այդ դէպքում ինչո՞ւ մեր եկեղեցին Աւետարան է հրատարակում եւ ոչ թէ միջնադարեան մեկնութիւններ: Անհասկանալի է: Եւ ինչո՞ւ աշխարհական հայ քրիստոնեան իրաւունք չունի Տէրունական աղօթքի իր ընկալման մասին անկեղծօրէն յայտնել իր ազգակիցներին: Վերջապէս ինչո՞վ է սխալ այդ աղօթքը Քրիստոսի աստուածային սիրոյ արտայայտութիւն համարելը:

Յօդուածիս վերնագրում գրաբար բերածս պատուիրանը փոքր-ինչ ընդարձակ բերում եմ աշխարհաբար: Յիսուսը դիմելով աշակերտներին ասում է. «Մէկն է ձեր Ուսուցիչը՝ Քրիստոս, եւ դուք ամենքդ եղբայր էք» (Մատթ. 13, 8): Ընդունո՞ւմ էք այս պարզ ասուած պատուիրանը, թէ՞ ոչ: Եթէ չէք ընդունում, նշանակում է Քրիստոսի Աւետարանին հակառակ էք: Եթէ ընդունում էք, նշանակում է քրիստոնեան, իրօք, մէկ ուսուցիչ պէտք է ունենայ: Ուստի եթէ որեւէ մարդու, գիտունի, արքի, հանճարի ասածը չի համընկնում Քրիստոսի պատուիրանին, քրիստոնեան գերադասութիւնը պէտք է տայ Քրիստոսի աւետարանական պատուիրանին: Յարգարժան Աբրահամ վարդապետը գրում է. *«Տաթեւացին մեր եկեղեցու մեծագոյն արբերից եւ ուսուցիչներից մէկն է»:* Այսինքն մեծագոյն մեր ուսուցիչները շատ են, մէկն էլ Տաթեւացին է: Ի՞նչ հասկանանք: Արդեօք սա համընկնո՞ւմ է Աւետարանում շատ որոշակի ասուածին՝ *«Մէկն է ձեր Ուսուցիչը՝ Քրիստոս»:*

Մեծարգոյ Աբրահամ վարդապետ Մկրտչեանը բերել է Գրիգոր Տաթեւացու «Գիրք հարցմանց»ից քաղուածք. «Զի գործ արդարութեան է սպանանել զթշնամիս: Նոյնպէս եւ աւարն արդարութեան մասն է»: Այսպիսով, յանձնարարում է թշնամուն սպանել եւ նրա ունեցուածքը կողոպտել: Այդ պատուիրանը հաստատող օրինակը բերուած է Հին կտակարանից, քանի որ Նորում նման բան հաստատող խօսք չկայ եւ չի կարող լինել: Խոնարհում եմ մեր հրաշալի Գրիգոր Տաթեւացու սրբութեան ու հանճարի առաջ. արդեօք սպանելու եւ կողոպտելու մասին այդ պատուիրանը Տաթեւացու ձեռքո՞վ է գրուել, թէ՞ հետագայի յաւելում է: Դժուար է ասել, բայց որ այն հակառակ է Քրիստոսի Աւետարանի ոգուն ու տառին, կարող է նկատել շատ թէ քիչ գրագէտ ամէն մարդ: Կարիք կա՞յ արդեօք Աւետարանից քաղուածքներ բերել՝ ցոյց տալու համար, որ Քրիստոսի վարդապետութիւնը փրկարար սէրն է, ներումը, խաղաղութիւնը, Աստծոյ Թագաւորութիւնը եւ ոչ թէ սպանելն ու կողոպտելը:

Իսկ որ մեր եկեղեցու հիմքերի հիմքը, սրբութեան սրբոցը եղել է Քրիստոս Իր Աւետարանով, կարծում եմ վիճելու բան չէ: Մի՞թէ պատահականութիւն է, որ հնուց պահպանուած հայերէն գրչագրերի մէջ ամենամեծաքանակը Աւետարաններն են: Մեր եկեղեցում պատարագի վերջում համբուրում ենք Աւետարանը եւ ոչ թէ նրա որեւէ մեկնութիւնը: Մեր ժողովուրդն էլ Աւետարանն է համարել ճշմարտութեան չափանիշը (որեւէ խօսքի ճշտութիւնը հաստատելու համար ասում է՝ Աւետարանի կողքին է գրուած):

Կարծում եմ նաեւ՝ անտեղի է մեծայարգ վարդապետի ամբաստանութիւնը «Լուսաւորչի» հասցէին: Հայաստանեայց առաքելական եկեղեցին ամենաազատամիտն ու ամենաժողովրդավարականն է եղել բոլորի մէջ: Չի ունեցել հաւատաքննութիւն (ինկուիզիցիա): Հռոմէադաւան եկեղեցին մի ժամանակ արգելում էր իր անդամներին կարդալ Աւետարան: Մեր եկեղեցին նման արգելք երբեւէ չի դրել: Կարծում եմ, որ մեծարգոյ վարդապետն էլ դէմ է հաւատաքննութեանը, եկեղեցուց վտարելուն կամ բանադրելուն առանց միջնադարեան մեկնութիւնների Աւետարան կարդացող եւ իր ընկալման մասին ազգակիցներին յայտնող քրիստոնեային: Ուստի ի՞նչ կարիք կար «Լուսաւորիչ» մեր միակ հոգեւոր թերթի դէմ այսպիսի մեղադրանք գրել. «Զարմանալ կարելի է, թէ ինչպէ՞ս է իրեն թոյլ տալիս «Ընդ հովանեաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի» հրատարակուող թերթը տպագրել մտացածին, Հայ եկեղեցու աւանդութիւնը խեղաթիւրող, անհիմն մեղադրանքներով համեմուած յաւակնոտ յօդուածներ» (արդեօք 37 թուի հոտ չէ՞ք առնում): Ընդ որում, այդ մտացածին-ը, խեղաթիւրող-ը, անհիմն-ը յարգարժան հեղինակը, կրկնեմ, համարում է Տէրունական աղօթքի այն ընկալումը, որի համաձայն այդ աղօթքը Քրիստոսի աստուածային սիրոյ արտայայտութիւնն է:

Ներողութիւն եմ խնդրում զուցէ եւ չափից աւելի անկեղծ լինելուս համար:

ՌԱՖԱՅԵԼ ԻՇԽԱՆԵԱՆ



«Ազգ» թերթի համակարգչային ծառայությունը կատարում է Apple Macintosh համակարգիչների տեխնիկական որակյալ սպասարկում:

ԱԶԳ

Դիմելով մեզ, դուք կարող եք ձեռք բերել հայերենի ավտոմատ տողադարձիչ:

«Ազգ»ի համակարգչային ծառայությունը ընդունում է նաեւ

- գովազդների
- խորհրդանիշների
- ֆիրմային նշանների
- կնիքների
- հրավիրատոմսերի
- տարբեր տեսակի ազդագրերի
- եւ ընդհանրապես համակարգչային ձեւավորման պատվերներ:

Դրանք կկատարվեն ձեր երեւակայածից բարձր մակարդակով:

Հասցեն. Երեւան, Հանրապետության 47, «Ազգ» թերթ. ☎ 58-1841, 56-2863

Շմուել Տրիգանո. Հրեաների զարմանալի պատմությունը

Օրերս Փարիզի «Ֆայար» հրատարակչությունում լույս տեսավ «Հրեական հասարակության պատմություն» խոշոր հիմնարար աշխատության առաջին երկու հատորները: Ստորեւ տպագրում ենք ֆրանսիական «L'Express» (23 սեպտ. 1992) հանդեսի թղթակցի հարցազրույցը հեղինակների խմբի ղեկավար, սոցիոլոգ Շմուել Տրիգանոյի հետ: Հարցազրույցն ավելի շուտ խորհրդակցություն է հրեա ժողովրդի աշխարհընկալման, իդեալների եւ դրանց իրականացման, սփյուռքի շուրջ, որ կարծում ենք հետաքրքրական է:

L'Express.– Ինչպե՞ս եք գնահատում հրեաների վիճակն արդի աշխարհում:

Շմուել Տրիգանո.– Կարելի է զարմանալ, որ հրեաները երեսուն դար են անցել եւ չեն ձուլվել, քաոսային ընթացքին հակառակ: Պատմության մեջ տեղի իրավունք ունեցող ժողովուրդները համապատասխանում են կոնկրետ չափանիշների. տարածքային ամբողջականություն եւ մշակութային համասեռություն, որոնք ցեմենտում են նրանց միասնությունը: Հրեաներն իրենց աշխարհագրական հիմքը կորցրին 70 թվականին, երբ հռոմեական կայսր Տիտոսը գրավեց Երուսաղեմը եւ ավերեց Երկրորդ տաճարը: Եվ միայն 1948 թվականին ստեղծվեց Իսրայելի պետությունը:

– Իսկ մինչ ա՞յդ:

– Եղել է 20 դար կազմող անդունդ, որի ընթացքում նրանք ցրվել են ազգերի մեջ: Նրանք այլեւս նույն լեզվով չէին խոսում, պատկանում էին տարբեր քաղաքակրթությունների, հաճախ՝ թշնամական կայսրությունների: Ողջ միջնադարի ընթացքում արաբա-մահմեդական աշխարհը Եվրոպային կապող կամուրջները շատ սակավ էին: Նույն վիճակն էր նախկին Խորհրդային Միության եւ Արեւմուտքի երկրների հարաբերություններում: Նման պայմաններում ամեն մի ժողովուրդ կարող է անհետանալ: Բայց հրեաները գոյատեւեցին, դառնալով մարդկության անչափ փոքր մասնիկը, որը բախվում է մշտական թշնամանքի: Եթե տարագրության ժամանակաշրջանը նման լիներ անվերջանալի խավարի, ապա հրեաների արդի գոյությունը լոկ առասպելական կաղվածություն կլիներ: Արդ, հենց Սփյուռքն էր, որ թույլ է տալիս միասին պահել հին եւ նոր ժամանակները, թեեւ նա չի ենթարկվում պատմաբանի դասական կատեգորիաներին: Սա է բարդությունը:

Սփյուռքի ժամանակաշրջանը լիովին իմաստավորվում է այն առումով, որ հրեաները այդ ժամանակ մշակեցին եղանակներ, մեթոդներ, որոնք պահպանեցին նրանց ինքնությունը: Նախ եւ առաջ նրանք կարողացան փոխհատուցել իրենց տարածքի կորուստը: Իսրայելի հողը դարձավ պատկառելի զորությամբ օժտված երեւակայական գործոն, հետեւապես՝ նաեւ սոցիալական լծակ: Մի մոռացեք, որ այդ հողը բացառիկ էր միայն Սուրբ Գրքի շնորհիվ: Սերնդե-սերունդ փոխանցվելով, վերադարձի գաղափարը համախմբեց հանրությանը, տարագրության ծնած տարբերություններին հակառակ: Կենսատարածքներն անջատված էին, բայց գոյություն ուներ ընդհանուր տարածք, որն ստեղծվել էր ներքին հաղորդակցությունների միանգամայն յուրօրինակ համակարգի շնորհիվ:

– Ինչպե՞ս կնկարագրեիք այն:

– Ես նշեցի երկրի հուշը: Որոշակի թվով հրեաներ դեռ գոյատեւում էին կորուսյալ երկրում: Երբ նրանք իրենց ապրուստի միջոցների հայթայթման համար բանագնացներ էին ուղարկում համայնքներ, նպատակը, անշուշտ, ֆինանսական էր: Այդուհանդերձ, այդ դեգերումների ընթացքում բանագնացը կրկնակի կապ էր ստեղծում, նախ հրեաների տարասփյուռ խմբերի եւ ապա խմբերից յուրաքանչյուրի եւ Իսրայելի՝ առասպելական կենտրոնի միջեւ: Բայց առկա են եղել նաեւ Գրքի՝ Սինայի վրա Մովսեսի ստացած տեքստի դերը եւ ուսումնասիրման, մեկնության կամ փոխանցման համար հավաքվելու նրա ընձեռած առիթները: Վերջապես, գործնական համերաշխության ցանցեր էին ստեղծվել հալածանքի դեմ պայքարելու համար:

– Ի՞նչ դեր է խաղում կրոնն այս համակարգում:

– Չկարծեք, թե այն միշտ միատարր է մնացել: Դարերի ընթացքում աղանդներ, վեճեր, հակամարտություններ են եղել: Մոտավորապես 9-րդ դարում ծագեց կարաիզմը, որը բավական նման է քրիստոնեության մեջ բողոքականների շարժմանը: Կեղծ մեսիաներ առաջնորդեցին ամբոխներին: Եվ այդպես մինչեւ սիոնիզմ, որը դասական ուղղափառության տեսակետից հերետիկոսություն է: Այս առումով, կրոնական միասնություն հազվադեպ է գոյություն ունեցել, թեեւ հրեաները շատ հաճախ կարողացել են համաձայնության գալ մի քանի էական կետերի շուրջ: Դրանցից է Գրքի գլխավոր դերի ընդունումը: Այդ գլխավորության իմաստը բնավ դոգմատիկ չէ: Եթե Իսրայելի պետությունը, լինելով իրավական պետություն, սահմանադրություն չունի, դա Գրքի դեմ ընտրության կատարման երկընտրանքից խուսափելու համար է: Գիտեմ, որ այդ ընկալումը հուշում է կղերական հասարակության եւ նույնիսկ աղանդի գաղափարը:

– Ենթադրենք, որ դա հրեականության կողմերից մեկն է:

– Համաձայն եմ: Բայց հրեական հանրության ներսում առկա որոշ խմբերի գերուղղափառ դիրքերն ընդհանուր ոչինչ չունեն Գրքի միավորիչ դերի հետ: Դարերի ընթացքում եւ ցրվածության պայմաններում Գրքի շուրջն է, որ ստեղծվել են հրեաների կապը, սոցիալական վեճը: Դա նման է ծովափի, որի վրա ժամանակի ալիքը միշտ եկել է ոչ թե փշրվելու, այլ ձեւավորվելու: Ամեն մի նոր սերունդ փորձել է տալ Հնգամատյանի իր մեկնությունը: Ամեն դպրոց մրցակցություն եւ տարակարծություն է ստեղծել հասարակության ներսում: Կարելի է նույնիսկ ասել, որ Գիրքը սոցիալապես ավելի կարեւոր է աստծուց, քանզի աստվածությունն արտահայտվում եւ դիմում է դրա միջոցով: Գիրքն իր սեփական կյանքն ունի հասարակության մեջ...

Հրեաներն ինչպե՞ս կարողացան հրեա մնալ արդիականության, այսինքն՝ ազատագրման պայմաններում: Ահա մի հարց, որն անլուծելի է թվում: Դրանից բխում է մի ուրիշ հարց. աշխարհիկ դարձող եվրոպացիներն ինչպե՞ս կարող են հակահրեականություն դրսեւորել հրեաների հանդեպ, որոնք իրենք եւս աշխարհիկ են դառնում: Բայց ավելի դյուրին է հարցնել, թե ինչո՞ւ հրեաները մնացին հրեա, քանի որ նրանք քաղաքացիներ էին դառնում մյուսների նման:

– Սարտրն ասում է. «Հակասեմականությունն է, որ հրեա է դարձնում»:

– Ճիշտ հակառակն է: Եթե որպես առարկա վերցնում ենք հասարակությունը, ապա պարզ է, պետք է ելակետ ունենալ հակառակ վարկածը: Եթե այդ հասարակությունը համառորեն գոյատեւում է, դա ոչ թե հակազդեցություն է շրջակա թշնամանքին, այլ տեղի է ունենում արարման եւ հաստատման եռանդը իր ներսում գտնելու պատճառով: Նա նման է կենդանի էակի, որն անկասկած սնվում է շրջակա միջավայրից, բայց լոկ դրա արդյունքը չէ: Համենայն դեպս, հրեաներն արդեն ուրիշ քաղաքակրթությունների հետ համակցության փորձ ունեին: Թեեւ ազատագրումը նրանց ձերբազատում էր օտարացման վիճակից, բայց տարագրությունը նրանց սովորեցրել էր պահպանել իրենց, միաժամանակ լինելով օտար միջավայրում: Ի դեպ, այդպես է ձեւավորվել նրանց ինքնությունը: Դիցուք, ես ուզում եմ բացարձակ լիմաստով հրեա լինել եւ իմ մեջ ջնջել իմ ֆրանսիական ծագման հուշը: Որոշ ժամանակ անց, անկախ իմ համոզմունքի ուժից, ես կբացահայտեմ, որ անձիս եզակիության ընկալման իմ ձեւը միանգամայն կապված է ֆրանսիական ժառանգությանս հետ: Հենց դա է սկսում գիտակցել Իսրայել ներգաղթողը: Հրեական ազգային համայնքի մեջ մտնելով, նա զգում է իր ինքնության հարաբերականությունը:

– Ուրեմն, նա իրեն ֆրանսիացի հրեա է զգում առաջվանից շա՞տ:

– Դեռ երկար ժամանակ այդպես կլինի: Հրեաների կեցության մեջ առկա է տարօրինակ երեւույթ. այն ծնել է շատ ուժեղ ինքնություն, որն այդուհանդերձ օտարին ներմուծում է իր մեջ: Դա սկզբունքորեն բացառում է ներամփոփումը եւ ինքնամեկուսացումը, թեեւ երբեմն դրանք էլ են առկա լինում: Ինձ համար հրեաները որոշ իմաստով մարդկության ներքին ժողովուրդն են: Եթե նրանք բոլորը հավաքվեին (դա կարող է տեղի ունենալ Իսրայել պետության մեջ, որտեղ կա 110-ից ավելի բնիկ ազգություն), նրանք կներկայացնեին միացյալ մարդկությանը:

– Ինչպե՞ս կարելի է բնորոշել քաղաքակրթությունների մեջ հրեաների խաղացած դերը:

– Շատ հաճախ նրանք միջնորդի դեր են խաղացել: Միջնադարում Ֆրանսիայի հարավում Պրովանսում ապրողները քրիստոնեական արեւմուտք բերեցին մոռացված հունական փիլիսոփայությունը, որն արաբները վերահայտնագործել էին եւ փոխադրել մահմեդական Իսպանիա: Նրանք այդ ձեւով անհատապես կամ կոլեկտիվ կերպով օգնել են դարաշրջանների ծննդին: Պարզապես այն պատճառով, որ նրանք միշտ առավել կոնֆլիկտային ձեւով են ապրել այն հարցերը, որոնք առաջադրվում էին մնացած մարդկությանը: Դա ոչ թե հրեաներին ներհատուկ առաքինություն էր, այլ տեղի էր ունենում այն պատճառով, որ նրանք առանցքային, հետեւաբար ռազմավարական դիրք էին զբաղեցնում:

– Տեղատու հասարակությունները զգացե՞լ են արդյոք նրանց ներկայության դրական արդյունքը:

– Տնտեսական տեսակետից անպայման: 18-րդ դարում Պրուսիային հարկավոր էր ձեռնարկատերերի միջնորդ խավ, որոնք կկարողանային արդիական տնտեսության վերածվող շուկա ստեղծել: Պրուսիան նախընտրեց, որ այդ գործով զբաղվեն հրեաները: Քանզի ինքը կարող էր նրանց վերահսկել: Այդ երկրում լինելով շատ վաղուց, նրանք միշտ օտարի վիճակում էին: Նրանք չէին կարող քաղաքներ մտնել առանց տուրք վճարելու: Այդ պայմաններում իշխանությունները հասկացան, որ իրենք կարող են օգտագործել հրեաներին: Նույն ձեւով, երբ ուսումնասիրում ենք ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանում հրեաներին պաշտպանող պամֆլետները կամ կենսագրերը, նկատում ենք կրկնվող մի փաստարկ. եթե չազատագրենք այդ «աշխատասեր ազգին», ապա նա շուտով թշնամի Անգլիային կմատուցի իր գիտելիքները: Ես չեմ ուզում նսեմացնել ազատարարների վեհ նպատակները, բայց չպետք է նաեւ միամիտ լինել:

– Կարելի՞ է արդյոք ասել, որ այսօր հրեաների վիճակը կանոնավորվում է:

– Թվում է, թե այն հասել է հավասարակշռության: Բավարա՞ր է դա արդյոք պնդելու, թե բոլոր վտանգները վերացել են: Համենայն դեպս, հրեաները կարող են պահպանել իրենց ինքնությունը, ապրել իրենց ուզածի պես, չհայտնվելով ձուլման վտանգի տակ: Այս տարօրինակ ազատությանը նրանք բնավ սովոր չէին: Բացառված չէ, որ նրանք վախեցած լինեն դրանից, նախընտրեն փախչել դեպի դյութիչ ապաստաններ:

– Ի՞նչը նկատի ունեք:

– Կարող են նախընտրել զոհի վիճակը եւ հակասեմականության նկատմամբ դիմակայությունը: Կամ էլ կարող են ենթադրել, որ բնականոն վիճակը մշակութային ժառանգության մոռացումն է: Պետք է հիշել, որ այս աննախադեպ ազատությունը հաջորդում է հրեաների կրած ամենաուժեղ հալածանքների դարաշրջանին: Երկրորդ աշխարհամարտի տարիներին հրեաների աննախադեպ հալածանքներն ու ջարդը հետպատերազմյան տարիներին շարունակում էին իրենց ազդեցությունը: Ոմանք այդ հալածանքները համարեցին մեծ աղետ, որն ազդարարում էր Մեսիայի գալուստը: Եվ Իսրայելի պետության ստեղծումը կարծես թե հաստատում էր նրանց իրավացիությունը: Հավատացյալ լինի, թե ոչ, հրեան պատմական վիճակում է իսրայելական արկածի դեմ հանդիման:

– Նա ի՞նչ է ակնկալում, որ Իսրայելը լինի մյուսներից ավելի «բարոյակա՞ն» երկիր:

– Երբ հայտնի է, որ Գրքի Մովսիսական օրենքի հետ առնչությունը եղել է հրեաների գոյատեւման ու հաստատման ակունքը, չեմ պատկերացնում, թե ինչպես կարելի է դրանից խուսափել: Պետության անհետացման 2000 տարիները չեն նշանակում, թե հրեաները կորցրել են բոլոր կապերը միաժամանակ քաղաքականության եւ պետության հետ: Բայց տարագիր հասարակությունն սահմանված չէր ստանձնել պետական իշխանության կառավարումը: Հենց այստեղ է գտնվում հրեականության արդի ճգնաժամի կենտրոնակետը: Հրեաները ստեղծել են տնտեսական շուկա, գյուղատնտեսություն, բանակ... Բայց այս իրողությունները ինչո՞վ են տարբերվում նախկինում այլ վայրերում եղածներից: Հրեականությունն այս բնագավառում պարունակո՞ւմ է արդյոք յուրահատուկ բարոյագիտություն: [illegible] է, որ մեսիական հույսը բյուրեղանում է այս մարտահրավերի շուրջ: Այսօր հրեական աշխարհում, գաղափարախոսությունների ընդհանուր փլուզմանը զուգընթաց, առկա է հույսի ճակատագիր: Ես դա պատկերացնում եմ որպես առավոտյան երկինք. մի կողմից լույս է ծագում, իսկ մյուս կողմից խավարը շարունակվում է:

– Իր հասարակությունը Մովսիսական օրենքին համաձայնեցնող հրեան ինչո՞վ է տարբերվում այն մահմեդականից, որը ձգտում է Ղուրանի օրենքի կիրառմանը:

– Եթե տարբերություն կա, ապա հրեականությունը պետք է դա ապացուցի, եւ սա է ամբողջ խնդիրը: Եթե նա անկարող է տալ քաղաքականությանը եւ պետությանը վերաբերող վերլուծություն, ապա կարծում եմ, որ նա կարող է անհետանալ:

– Իսկ երկի՞րը, այն իմաստով, որ պաղեստինցիների հետ դրա կիսումն անխուսափելի է:

– Պաղեստինցիների ազգային գիտակցությունն առնվազն մեկ պարտք ունի հրեաների հանդեպ. այն ցեմենտվել է հրեաների ներկայության շուրջ, քանի որ սրանք վերադարձել են: Այստեղ երկու ժողովուրդների միջեւ գոյություն ունի մի հարաբերություն, որը բավարար չափով հաշվի չի առնվում: Ինչ վերաբերում է հողին, Գրքի համաձայն այն ունի միանգամայն տարօրինակ կարգավիճակ. հրեաները չեն կարող ոչ այն նվաճել, ոչ էլ նույնիսկ այնտեղ մտնել, քանի դեռ այն զբաղեցնողները դրան անարժան չեն դառնա: Նրանք պետք է իրենք արժանի դառնան հողին: Իսկ տեղավորվելուց հետո հարկ կլինի, որ նրանք շարունակեն արժանի լինել հողը պահպանելու համար: Այլապես այդ հողը «արտաքսում է» իր բնակիչներին: Վերհիշենք, որ բոլոր կայսրությունները ցանկացել են տիրել նրան: Եւ բոլորը կորցրել են այն: Ասես դրա բացարձակ սեփականացումը մերժված է մարդկանց: Իսկ վատթարագույնն Իսրայելի համար կլիներ արմատակալելը, այդպիսով մոռանալով իր սփյուռքի պատմության դասերը: Հողի բիբլիական կառուցվածքում կարելի է գտնել զարմանալի փաստ: Օրենքի համաձայն 7 տարին մեկ անգամ կալվածքները ազատագրվում էին: Դրանք իրենց սկզբնական տերերին էին վերադարձվում միայն յոթն անգամ յոթ տարի անց: Այս գաղափարը հիմք է 19-րդ դարի ֆրանսիացի ուտոպիստ սոցիալիստներին: Զուգորդելով նստակեցությունը եւ քոչվորությունը, նա յուրահատուկ հարաբերություն է ստեղծում հողի հետ, որի նպատակն այն է, որ մարդը հողին կցված չմնա: Իսրայելցի կամ մյուս հրեաներին հնարավոր չէ ավելի լավ հիշեցնել մարդկության ներքին ժողովրդի իրենց առաքելությունը: ■

Կամրջակ անդրհայելային աշխարհի հետ

Մոսկվայում ստեղծվել է Արտառոց երեւույթների կենտրոնական թանգարանը։ Դրա հիմնական բաժինները վերաբերում են էքստրասենսորիկայի, ՉԹՕ-ների, պոլտերգեյստի, «ձնեմարդու» խնդիրներին։ Թանգարանի մի հատուկ բաժինը կոչվում է «Արտառոց երեւույթների ազդեցությունը մարդու կյանքի ու գործունեության վրա»։ «Путь к себе» ամսագրի թղթակից Տ. Արտամոնովան հանդիպել է թանգարանի տնօրեն Անդրեյ Նովիկովի հետ։

– Դուք երբեւէ եղե՞լ եք գերեզմանոցում երեկոյան ժամը հինգից հետո, երբ սկզբնական դողդոջուն մթնշաղն է իջնում այդ տխուր վայրի վրա,– անսպասելի ինձ հարցրեց թանգարանի տնօրենը։ Բավական վկայություններ կան, որ այդ ժամանակ եւ ավելի ուշ որոշ գերեզմանների մոտ հայտնվում են լուսավոր, թրթռացող, կիսաթափանցիկ կերպարանքներ։ Հաճախ նման կերպարանքներ գիշերները ոչ վաղուց մահացածի հարազատներն իրենց տներում են տեսնում, համայնքների քահանաները այն տեղերում, որտեղ եղել է հանգուցյալը հուղարկավորությունից առաջ։ Նման երեւույթների վկայություններ շատ կան, սակայն դրանք դեռեւս մեկնաբանված չեն։

Ֆրանսիացի հայտնի նկարիչ Դյուրվիլը (Նովիկովն ինձ ցույց է տալիս Դյուրվիլի դիմանկարը) մեր դարի 30-ական թվականներին կատարել է չափազանց հետաքրքիր փորձեր, որոնք նկարագրել է իր գրքերում։ Մութ սենյակում մարդկանց ներկայությամբ նա մարդուն հասցրել է հիպնոսի վիճակի եւ նրա վրա ազդել իր էներգիայով։ Դրանից հետո մարդու աջից ու ձախից առաջացել են սյուներ հիշեցնող լույսի առկայծող հոսքեր։ Մարդուց աջ գտնվող լույսն աստիճանաբար սկսել է անցնել երկրորդ լուսավոր հոսքի կողմը՝ մինչեւ նրա հետ լրիվ միաձուլվելը։ Դրանից հետո ներկաները նկատել են պայծառ ճառագայթի հայտնվելը, որը կարծես կապում է լույսի այդ հոսքը մարդու հետ՝ միանալով դորսի հատվածում։ Այնուհետեւ լուսասյունը աստիճանաբար հստակ կերպարանքի ձեւ է ընդունել, ներկաները սարսափով հայտնաբերել են, որ այն շատ նման է հիպնոսի վիճակում գտնված մարդուն։ Սակայն գոյացած կերպարանքը հագուստի փոխարեն պարուրված է եղել մշուշե ամպով։ Առանձին դեպքերում հաջողվել է տեսնել նաեւ հագուստով ուրվական։

Դյուրվիլն անց է կացրել փաստացի առաջացույցներով ավելի քան հազար փորձ, եւ արդյունքը մշտապես եղել է նույնը։ Սենյակում տեղի ունեցածը սակայն բոլորը չէ, որ տեսել են, այլ միայն մի մասը՝ հավանաբար առանձնահատուկ նուրբ էքստրասենսորային ընկալունակությամբ օժտված մարդիկ։ Սակայն, նույնիսկ նրանք, ովքեր ուրվականը չեն տեսել, զգացել են նրա ներկայությունը. լսել են թխկոց, որը ուրվականն արձակել է Դյուրվիլի խնդրանքով. տեսել են այն առարկաների շարժումը, որոնց հետ նա առնչվել է։

Հայտնի շատ գիտնականներ (թեեւ դրա մասին քչերը գիտեն), օրինակ, Ի. Նյուտոնը, Ի. Կանտը, Ֆ. Պարացելսը, զբաղվել են պատմահոգեբանական փորձերով, բայց Դյուրվիլը հետաքրքիր է նրանով, որ նա գիտնականներից առաջինը եզրահանգեց եւ բացահայտ գրեց այն մասին, որ գոյություն ունի մեծ քանակությամբ ամենատարբեր էակներ միավորող ինչ-որ անդրաշխարհ։

– Ես Դյուրվիլից հետո,– շարունակում է Նովիկովը,– նույնպես բացարձակ համոզված եմ, որ նման աշխարհ իրոք գոյություն ունի։ Դա, անշուշտ, նյութական, սակայն այլ, մերից տարբեր հաճախականությունների վրա ժամանակի եւ տարածության մեջ գտնվող աշխարհ է։ Այդ աշխարհը ոչ թե այլ տարածության մեջ է, այլ հենց այստեղ, մեր կողքին, պարզապես այլ հաճախականության վրա է։ Մարդիկ անընդհատ հանդիպում են անդրաշխարհի բնակիչների հետ, դրանք դեւերն են ու սրբերը, տնային ոգիներն ու «այլմոլորակայինները», տեխլիքները, դրանց մեջ են մտնում նաեւ Դյուրվիլի «ուրվականները»։ Այդ էակները մշտապես ներկա չեն մեր առօրեական նյութական աշխարհում, այդուհանդերձ, ըստ իս, նրանք սերտորեն կապված են մեզ։ Ենթադրում եմ, որ երկու աշխարհները կապող կամրջակը մարդու կենսադաշտն է։ Ազդելով դրա վրա, անդրաշխարհը կարող է ներազդել մեզ վրա։ Եւ մենք, մեր հերթին, ազդելով մեր կենսադաշտի վրա, կարող ենք փոխազդեցությունների ենթարկվել անդրաշխարհի հետ։ Դա, իհարկե, առայժմ միայն վարկած է, իսկ առավել իրականը (եւ դա կարող են հաստատել մեր թանգարանի բազմաթիվ գիտափորձերը) այն է, որ անդրաշխարհը կարող է ազդել մեզ վրա։ Եւ շատ հաճախ դա անում է։

Միխայիլ Լոմոնոսովը ժամանակին իր օրագրում նկարագրել է իր հետ պատահած դեպքը։ Մի անգամ գիշերը նրան հայտնվել է հայրը եւ ասել, թե ինքը մեռել է բեւեռային կղզիներից մեկում, պատմելով, թե հստակ որտեղ է այն գտնվում։ Որոշ ժամանակ անց նա իմացել է, որ հայրը կորել է։ Լոմոնոսովն իր հայրենակիցներին հայտնել է տեսիլքի ժամանակ նկարագրված վայրի կոորդինատները, եւ հոր մարմինը գտնվել է այդ նույն տեղում։

Կամ այլ օրինակ։ Բոլորին հայտնի է պատմությունը, որ Ժաննա դ'Արկը Հարյուրամյա պատերազմի ժամանակ (1337-1453) փրկել է Ֆրանսիան։ Ըստ իս, ասում է Նովիկովը, դա աշխարհիկ գործերի վրա անդրաշխարհի ազդեցության ակնհայտ օրինակներից է։ Բազմաթիվ գրքերից հայտնի է, որ Ժաննան մշտապես ձայն է լսել։ Շատ պատմաբաններ դա հիվանդություն են համարել։ Ես կարծում եմ, որ անդրաշխարհը նրան ցուցումներ էր տալիս՝ ինչ եւ ինչպես անել։ Այլապես ինչպե՞ս կարող էր տասնյոթամյա աղջնակը թափանցել թագավորի մոտ եւ հայտարարել, թե ինքը գիտի ինչպես փրկել Ֆրանսիան։ Դեռ մի բան էլ ավելի նրան հավատացին։ Ինչ-որ մեկը նրան ղեկավարում էր եւ հուշում նրա բոլոր քայլերը։ Թագավորի մոտ նրա հայտնվելով ռազմական իրադրությունը փոխվեց։ Թագավորին այցելելուց հետո Ժաննա դ'Արկը մեկնել է Օռլեանի մերձակայքում գտնվող զորքի մոտ, ուր ֆրանսիացիներին հաջողվել է դեպքերի ընթացքը վայրկենապես փոխել հօգուտ իրենց։ Ավելի քան հարյուր տարի ձգվող պատերազմում անգլիացիները պարտություն կրեցին։

1395-ին Թեմուրլանգի անպարտելի զորքը շարժվում է Մոսկվայի վրա։ Թվում է, թե նրան ոչինչ չի կարող կանգնեցնել։ Հանկարծ ողջ զորքը մի ակնթարթում շուռ է գալիս եւ փախչում գրեթե մինչեւ Միջին Ասիա։ Ի՞նչ էր տեսել զորքը։ Ինչ էլ երեւացած լինի նրան, ես բավական հստակորեն այն մտքին եմ, որ միջամտել են այլ, զուգահեռ աշխարհի ուժերը, նկատում է Անդրեյ Նովիկովը։ Շատ գրողներ, գիտնականներ, քաղաքական գործիչներ թողած գրառումներում նշել են, որ իրենց վրա մշտապես զգացել են ճակատագրի ձեռքը, որն իրենց հետ խաղացել է, ինչպես տիկնիկների հետ։ Կարծում եմ, յուրաքանչյուր ոք ժամանակ առ ժամանակ իր վրա դա զգում է։ Օրինակ, Նապոլեոնը խոսել է այն մասին, որ ինքը հաճախ այնպիսի զգացողություն է ունեցել, թե ինչ-որ մեկը կառավարում է իրեն։ «Ես գնում եմ դեպի ինձ անհայտ նպատակը եւ քանի դեռ գնում եմ դեպի այն, ինձ ոչինչ չի կարող կանգնեցնել, բայց երբ ես հասնեմ այդ նպատակին (չգիտեմ, թե դա որն է), ինձ ոչնչացնելու համար հյուլեն կբավականացնի»։ Ահա թե որտեղից էր Նապոլեոնի աներկյուղությունը, շատ ու շատ այլ գիտնականների ու հանրահայտ անձանց ինքնավստահությունը։

Եւ այսպես, պարահանդեսն անդրաշխա՞րհն է ղեկավարում։ Թանգարանի ցուցանմուշներն ապացուցում են, որ հաճախ հենց այդպես էլ լինում է։ Ինչ արած, ժամանակն է խոստովանել, որ անդրհայելին իրողություն է, որը չընդունելը բանական չէ։ Եւ քանի որ գոյություն ունեն մարդու վրա ազդող ուժեր, ապա տրամաբանական կլիներ եզրակացնել, որ նրանք մեզանից ոչ միայն առավել ուժեղ, այլեւ իմաստուն ու բանական են։

■

Վեց ամսից նոր Ուզբեկստան են խոստանում

Ուզբեկստանի «Բիրլիկ» ազգային-ժողովրդավարական կազմակերպության նախագահ Բուլատովը BBC կայանի թղթակիցներին հայտարարել է, որ Քարիմովի քաղաքականությունը կհանգեցնի նրան, թե ժողովրդավարական եւ կրոնական արժեքականությունը ներկայացնող ընդդիմադիր ուժերը կմիավորվեն ընդդեմ նեոկոմունիստական իշխանության, եւ վեց ամիս հետո Ուզբեկստանում կկրկնվի տաջիկական տարբերակը։ Նա նշել է, որ ազգային-ժողովրդավարական ընդդիմությանը հարվածելով, Քարիմովը լռեցնում է իսլամական արժեքականների շարքերը։ Բուլատովը խիստ լարված է գնահատում փոխհարաբերությունները ուզբեկների եւ երկրի բնակչության քառորդը կազմող տաջիկ բնակչության միջեւ։

ՅՈՒՆԵՍԿՕ-ն կօգնի Աֆրիկացի ուսանողներին

BBC կայանը հաղորդում է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն 419 000 դոլլար է տրամադրելու Արեւելյան Եվրոպայի աֆրիկացի ուսանողներին, որպեսզի նրանք ավարտեն իրենց ուսումը եւ հետո միայն վերադառնան հայրենիք։

Ֆրանսիացի սենատորներն ամենեւին էլ հրեշտակ չեն

RFI կայանը հաղորդում է, թե ֆրանսիական մամուլի հարցման արդյունքներով պարզվել է, որ Ֆրանսիայի սենատորների գերակշռող մեծամասնությունը տարբեր ճանապարհներով խուսափել է բանակում ծառայելու իր քաղաքացիական պարտականությունից։ Նրանց մեծ մասը այս կամ այն կերպ գործ է ունեցել թմրադեղերի հետ եւ կիրառել է դրանք եւ վերջապես գերակշռող մեծամասնությունը հավատարիմ չէ իրենց կանանց, իսկ սենատորներից մեկը հայտարարել է, որ իր սիրտն այնքան մեծ է, որ բավարարում է ոչ միայն իր օրինական կնոջը, այլեւ շատ այլ բազմաթիվ կանանց։

Եվրոպա գազ կմատակարարվի

Ռուսաստանի փոխվարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինը «Ի-Ֆ»-ին հաղորդեց, թե Ուկրաինայի վարչապետ Լեոնիդ Կուչմայի եւ Ռուսաստանի կառավարության ղեկավար Եգոր Գայդարի միջեւ հոկտեմբերի 22-ին Մոսկվայում կայացած բանակցությունների ժամանակ կողմերը նշել են, որ նավթի եւ գազի մատակարարումները, այդ թվում Արեւմտյան Եվրոպայի երկրներ պետք է կատարվեն անկախ ներքին իրավիճակից։ Այս շաբաթ երկու երկրների փորձագետների համատեղ խումբը կսկսի մշակել Ռուսաստանից Ուկրաինա եւ Արեւմտյան Եվրոպա գազ մատակարարելու նոր համակարգ։

Չեռնոմիրդինը հաղորդեց, որ Ուկրաինան գազի համար Ռուսաստանին պարտք է մոտ 25-30 միլիարդ ռուբլի, եւ բանակցությունների ընթացքում ուկրաինական պատվիրակությունն առաջին հերթին պարտավորվել է վճարել պարտքերը Ռուսաստանին գազի, նավթի եւ ածուխի մատակարարումների դիմաց։

Ֆուտբոլասեր վերաբնակիչներ

RFI ռադիոկայանը հաղորդում է, որ Բրյուսելում ռումինական եւ բելգիական թիմերի խաղին ժամանած շուրջ երեք հարյուր ռումինացի ֆուտբոլասերներ հայրենիք չեն վերադարձել, դրանով ավելացնելով Բելգիայում անօրինական ներգաղթածների թիվը։

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ

Ֆիշեր–Սպասկի.

24-րդն այսօր

Սպասկին հերթական խաղադադարը վերցրեց եւ հինգշաբթի օրը նախատեսված 24-րդ պարտիան չկայացավ։ Այն տեղի է ունենալու այսօր։ Սպիտակներով խաղալու է Սպասկին։ Ուշագրավ է, որ մինչեւ-հիմա Ֆիշերը ոչ մի անգամ չի օգտվել խաղադադարի իրավունքից։ Հաշիվը նույնն է՝ 8:4 հօգուտ Ֆիշերի։

ՖԻՇԵՐ-ՍՊԱՍԿԻ

23-րդ պարտիա

Սիցիլիական պաշտպանություն



1. e4 c5 2. Ձc3 e6 3. Ձge2 Ձc6 4. g3 d5 5. ed ed 6. d3 Ձf6 7. Փg2 Փe7 8. Փg5 d4 9. Փ:f6 Փ:f6 10. Ձe4 Փe7 11. Ձf4 0-0 12. 0-0 Նe8 13. Թh5 g6 14. Թd5 Փf5 15. Նfe1 Աg7 16. a3 Նc8 17. h3 Թ:e5 18. Ձ:d5 Փf8 19. g4 Փe6 20. Ձef6 Նfd8 21. g5 Փd6 22. Նe4 Ձe7 23. Նh4 Նh8 24. Նe1 Ձf5 25. Նhe4 h6 26. h4 hg 27. hg Նh4 28. Ն:h4 Ձ:h4 29. Նe4 Ձf5 30. Ձf4 Փa2 31. Ձ4d5 Փ:d5 32. Ձ:d5 Աf8 33. Աf1 Նe8 34. Ն:e8+ Ա:e8 35. Ձf6+ Աd8 36. Փ:b7 Փf4 37. Ձe4 Փc1 38. a4 Փ:b2 39. Ձ:c5 Փc1 40. Փe4 Փ:g5 41. Փ:f5 gf 42. Ձb3 Փf6 43. Աg2 Աd7 44. Աg3 Աe6 45. Ձa5 Փe5+ 46. Աh4 Փf6+ 47. Աh5 Աd5 48. Աh6 Աc5 49. Աh7 Աb4 50. Ձc6+ Աc3 51. Աg8 Ա:c2 52. Ա:f7 Փh8 53. a5 Ա:d3 54. a6 Աe2 55. Ձ:a7 d3 56. Ձc6 d2 57. a7 d1Թ 58. a8Թ Թd5+ 59. Աg6 Թe6+ 60. Աh7 Փc3 61. Ձd8 Թe7+ 62. Աg6 Թf6+ 63. Աh5 Թh8+ 64. Աg6 Թg7+ 65. Ա:f5 Թf6+ 66. Աg4 Թg6+ 67. Աf4 Փd2+ 68. Աe5 Փc3+ 69. Աf4 Թd6+ 70. Աf5 Թd7+ 71. Աg5 Թe7+ 72. Աf5 Թf6+ 73. Աg4 Թg7+ 74. Աf5 Թf6+ 75. Աg4 Թg6+ 76. Աf4 Փd2+ 77. Աe5 Թg5+ 78. Աe6 Թg4+ 79. Աf7 Թd7+ 80. Աg6, ոչ ոքի։ ■

Գարի Կասպարով.

«Դանիելյանները հրաշալի են խաղում»

Գ. Կասպարովը, վերադառնալով Արգենտինայից, հայտնեց, որ Ռուռալա քաղաքում անցկացվող աշխարհի մինչեւ 20 տարեկան շախմատիստների առաջնություններում հրաշալի են խաղում Հայաստանի երկու պատվիրակները։ Եւ Զովիկ Դանիելյանը, եւ Էլինա Դանիելյանը, 5 տուրից հետո ունենալով 4-ական միավոր, տեղ են զբաղեցնում համապատասխանաբար պատանիների եւ աղջիկների մրցաշարերի առաջատարների մեջ։

ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աշոտ Բարսեղյանը խփեց 7 գոլ

Եզրափակիչ փուլ (1-12-րդ տեղեր)

10-րդ տուր

«Նաիրի»-«Կանազ»՝ 3:2

«Արարատ»-«Կոտայք»՝ 3:0

Դժվար է կասեցնել Աշոտ Բարսեղյանին

Հերթական տուրում մեկ խաղում խփվեց միջինը 7 գնդակ։ Ընդ որում, «Կիլիկիա»-ի հետ խաղում հենց նույնքան գոլի հեղինակ դարձավ «Բանանց»-ի հարձակվող Աշոտ Բարսեղյանը, որն իր գոլերի թիվը հասցրեց 29-ի եւ ռմբարկուների ցուցակում դուրս եկավ երկրորդ տեղը։

«Արարատ»-«Կոտայք» խաղում աչքի ընկավ Արմեն Շահգելդյանը, որը դարձավ 2 գոլի հեղինակ։ Այս կիսապաշտպանն անկասկած մեր առաջին առաջնության լավագույն խաղացողներից է։ ■

Ֆուտբոլ. եվրոպական գավաթներ

«Սպարտակ» (Մոսկվա)-«Լիվերպուլ» (Անգլիա)՝ 4:2

«Թուրին» (Իտալիա)-«Դինամո» (Մոսկվա)՝ 1:2

Պատասխան հանդիպումները կկայանան նոյեմբերի 4-ին։

Հատկապես հաջող պետք է համարել «Սպարտակ»-ի ելույթը, որն ընդհանուր դասակարգումով եվրոպայում 29-րդն է, բայց հաղթեց աշխարհասի 6-րդ թիմին։ Հետաքրքիր է նշել, որ եվրոպական մրցաշարերի երկարամյա արդյունքների հաշվարկով ամենաբարձր գործակիցներն ունեն իսպանական երկու թիմերը՝ «Ռեալ»-ը եւ «Բարսելոնա»-ն։ ■

Մրցաշարային աղյուսակը հոկտեմբերի 24-ի դրությամբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. ՀՄԸՄ	20	15	3	2	70-28	33
2. Բանանց	19	15	2	2	64-21	32
3. Շիրակ	19	15	2	2	50-14	32
4. Արարատ	19	13	3	3	66-15	29
5. Վան	21	11	1	9	47-46	23
6. Սյունիք	21	7	3	11	39-47	17
7. Նաիրի	20	6	5	9	24-44	17
8. Կոտայք	19	6	3	10	26-38	15
9. ՀՄՄ-ՖԻՄ	19	4	4	11	25-39	12
10. Զվարթնոց	20	3	5	12	30-56	11
11. Կիլիկիա	20	3	2	15	21-86	8
12. Կանազ	19	2	3	14	25-53	7

Բաժինը վարում է ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

Ձերբակալվել են կաշառակերները

Ռուսաստանի Դաշնության անվտանգության նախարարության տնտեսական անվտանգության վարչությունը կասեցրել է Ռուսաստանի արտաքին հարաբերությունների նախարարության «Սպեցվնեշտեխնիկա» պետական արտաքին տնտեսական ընկերության մի խումբ ղեկավարների հակաօրինական գործունեությունը: Նրանք մեղադրվում են արտասահմանյան ֆիրմաներից խոշոր չափերով կաշառք ստանալու մեջ: Առգրավվել են 200 միլիոն ռուբլու թանկարժեք իրեր եւ դրամ: Անվտանգության նախարարության ծառայությունները ձերբակալել են նաեւ սեպտեմբերի 8-ին «Մոսկովսկիե նովոստի» թերթում հրապարակված «Թունավորված քաղաքականություն» հոդվածի հեղինակներից մեկին: Նախարարության կարծիքով, այդ հրապարակման մեջ բացահայտվել են քիմիական տեխնոլոգիայի ոլորտում մշակումների իրավիճակի մասին պետական գաղտնիք հանդիսացող մի շարք տեղեկություններ: Ռուսաստանի գլխավոր դատախազի թույլտվությամբ կատարված խուզարկության ժամանակ ապացուցվել է նրա հանցանքը:

Սպիդը մահացության առաջնային պատճառներից

Նոր ֆեդերալ վիճակագրության տվյալներով, անցյալ տարի ԱՄՆ-ում գրանցվել է սպիդից մահացության 10 դեպք, գրում է «Հերալդ թրիբյուն»-ը հոկտեմբերի 8-ի համարում: Ամերիկայի որոշ քաղաքներում 25-44 տարեկան չափահաս երիտասարդների համար այն դարձել է կյանքին սպառնացող առաջնային ախտահարումը, ետեւում թողնելով սրտային, ուռուցքային հիվանդությունները ու անգամ սպանությունները: 1990-91 թվականների ընթացքում սպիդից մահացողների թիվն աճել է 24 տոկոսով:

Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը կարող է լինել միայն հաշվեկշռված

«Չի կարելի խոսել Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների ինքնուրույն «արտաքին քաղաքականության» մասին, ինչպես չի կարող լինել հանրապետությունում բնակվող ժողովուրդների ազգային, կրոնական, մշակութային, պատմական առանձնահատկությունները չարտահայտող արտաքին քաղաքականություն: Այդ մասին հայտարարեց Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը միջազգային եւ արտաքին տնտեսական հարաբերությունների կատարելագործման հարցերով Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների ներկայացուցիչների երեկ Մոսկվայում բացված երկրորդ հանդիպման ժամանակ: Ա. Կոզիրեւի խոսքերով, Ռուսաստանի ներքին կառուցվածքից ելնելով նրա արտաքին քաղաքականությունը կարող է լինել միայն բազմազգ եւ հաշվեկշռված: Նախարարը կտրականապես դեմ արտահայտվեց Ռուսաստանի ներքին եւ արտաքին քաղաքականության մեջ ազգայնամոլության եւ շովինիզմի տարրեր մտցնելուն: Ինչ վերաբերում է ԱՊՀ երկրների հետ հարաբերություններին, Ա. Կոզիրեւը նշեց այնպիսի քաղաքականության կառուցման անհրաժեշտությունը, որը «հիմնված լինի ոչ թե տարածքային պահանջների, այլ սահմանների թափանցիկության ապահովման վրա»: «Անշուշտ, խոսքը գնում է այնպիսի թափանցիկության մասին, որը կբացառի Ռուսաստանի բնական եւ այլ հարստությունների ապօրինի վաճառքը»:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նվիրում Ստրավինսկուն

Այսպես է կոչվում թեմատիկ նոր սկզբունքով եւ ծանոթ երաժշտությունը նորի, անծանոթի հետ միավորող համերգաշարը: Կազմակերպելով այս համերգները հանրապետության մշակույթի նախարարության բազայի վրա (ըստ էության, դրանք կարելի է կազմակերպել նաեւ առանց այդ բազայի, միայն թե լինի շահագրգռված երկրպագու), ես իմ առջեւ մի քանի նպատակ էի դրել: Առաջին հերթին մասամբ փոխհատուցել հյուրախաղերի մեկնած երաժիշտների բացակայությունը, որոնց կատարումները ընդլայնում էին մեզ մոտ հնչող խաղացանկը: Երկրորդ, կատարողական փորձի մեջ ներգրավել նոր ուժեր, բացահայտել հանրապետության նորահաս երաժշտական հնարավորությունները: Երրորդ, ունկնդիրներին հրամցնել կոնցեպտուալ համերգաձեւերով, որտեղ նորույթը պայմանավորված է ստեղծագործությունների ընտրությամբ, ծրագրում դրանց հերթականությամբ, ինչպես նաեւ երաժշտական մեկնաբանության բնույթով:

Ֆրանսիական եւ ամերիկյան երաժշտություններին հաջորդած Իգոր Ստրավինսկուն նվիրված համերգը (Կամերային երաժշտության տուն, 20 հոկտեմբերի) քայլ էր դեպի առաջ: Ափսոս միայն, որ այն չհավաքեց բազմամարդ լսարան: Դրանում, կարծում եմ, մեղավոր էր համերգից ընդամենը երկու օր առաջ տեղեկացնող գովազդը: Ցավալի է նաեւ, որ շահագրգիռ անձինք պարզապես չհամարեցին ներկա լինել: Չնայած այդ նրանց չխանգարեց հայկական հեռուստատեսությամբ խոսել այդ համերգների կազմակերպման «անձնական նախաձեռնության» մասին, ես ի նկատի ունեմ հոկտեմբերի 21-ի գիշերային հաղորդումը, որտեղ ոչ նախարարը, եւ ոչ էլ հաղորդումը վարող երաժշտագետ Սեդա Շեյրանյանը հարկ չհամարեցին նշել համերգի կազմակերպիչների եւ կատարողների անունները...

Այդուհանդերձ, Իգոր Ստրավինսկու՝ 20-րդ դարի այդ մեծ երգահանի ծննդյան 110-ամյակին նվիրված համերգը կարելի է պատմական համարել: Դահլիճում ներկա գտնվող՝ Հայաստանի Ամերիկյան համալսարանի պրոռեկտոր Ալեքսանդր Կալոյանը («Երաժշտական նոր նախաձեռնություններ»-ի մշտական հաճախորդը) շատ զարմացած էր, որ այսօրվա բզկտված Հայաստանում հնարավոր եղավ երաժշտական նման գեղեցիկ ընծա մատուցել Ստրավինսկուն:

Ութ ստեղծագործություններից հինգը Երեւանում կատարվում էին առաջին անգամ: Ստրավինսկու կամերային երաժշտությունը մեզ մոտ, ցավոք, հանրահայտ չէ: Այն գրեթե անծանոթ է լայն ունկնդրին, ավելին, մասնագետների մեջ էլ գիտեն միայն նեղ շրջանակներում: Դա բացատրվում է նրանով, որ այն պահանջում է մտավոր հասուն մարզվածություն, զարգացած գեղարվեստական ճաշակ, կառուցվածքի գեղեցկություն, երաժշտական գծերի տարածքում շարժվող ռիթմախաղերի ըմբռնում: Այդ որակների գնահատման եւ ճիշտ կողմնորոշման համար անհրաժեշտ է, որ Ստրավինսկու ստեղծագործությունները դառնան մեր կենցաղի անբաժան մասը: Այդ դեպքում Ստրավինսկու արվեստը կընկալվի նույն կերպ, ինչպես Ազգային սիմֆոնիկ նվագախմբի համերգաշրջանը բացած *«Սրբազան գարնան»* բարդ պարտիտուրան՝ համերգային Մեծ դահլիճում ներկա ամենատարբեր, պատրաստվածության ունկնդիրների մոտ:

Իսկ Ստրավինսկու ստեղծագործությունների այժմ գրախոսվող կամերային համերգն ուներ որակյալ եւ նուրբ ունկնդիր, այդ պատճառով էլ պատահական չէ, որ հաջողությունը գերազանցեց բոլոր սպասելիքները: Ռուբեն Սիարոնյանի ղեկավարությամբ Հայաստանի պետական կամերային անսամբլի ծրագրի գագաթնակետը դարձավ նշանավոր «Բազելյան կոնցերտ»: Ինչպես դիրիժորը, այնպես էլ նվագախումբը ցուցադրեցին կատարյալ վարպետություն եւ բարձր երաժշտականություն: Նրանց կատարմամբ Ստրավինսկու պարտիտուրան բառացիորեն լուսազօծվեց գույների ներդաշնակությամբ եւ իմաստային նրբերանգներով, այդ ամենը զարմանալի ճկուն էր ու բարեկիրթ: Երկու դաշնամուրով նվագի բարձր հմտություն ցուցադրեցին նաեւ Արմինե եւ Անահիտ Սողոմոնյանները: Ստրավինսկու Սոնատը նրանց կատարմամբ հնչեց մեկ շնչով եւ անսամբլային տեսակետից այնքան միաձույլ, որ թվում էր, հնչում է միայն մեկ գործիք: Սողոմոնյան քույրերի նման համերգի բոլոր մասնակիցները երիտասարդ էին, եւ դա դարձավ Ստրավինսկուն նվիրված երեկոյի բնորոշ գծերից մեկը:

Երիտասարդ երգիչների աստղաբույլը ղեկավարում էր Մկրտիչ Մկրտչյանը, որը դաշնակահար Վահան Սարգսյանի հետ Երեւանում առաջին անգամ կատարեց *«Պոլ Վեռլենի երկու բանաստեղծությունը»*: Երկու կատարողներն էլ արդեն ձեւավորված երաժիշտներ են երաժշտական իրենց աշխարհայացքով: Ինչպես եւ ֆրանսիական համերգի ժամանակ, նրանց նվագը հիշարժան էր փափուկ հնչողությամբ եւ բնածին բարեկրթությամբ:

Հաճելի անակնկալ էր կոնսերվատորիան վերջերս ավարտած երկու երգչուհիների ելույթը: Լիա Սարգսյանը շատ արտիստիկ ու արտահայտիչ կատարեց երկու ռոմանս Կ. Բալմոնտի խոսքերով (դաշնամուրի պարտիան հմտորեն վարեց Նատալյա Գաբրիելյանը), իսկ Ալլա Ավետիսյանը մենակատարեց սոպրանոյի եւ կամերային անսամբլի համար «Երեք բանաստեղծություն ճապոնական քնարերգությունից» գործում: Երգչուհու երերուն, թրթռացող փափուկ ձայնը համապատասխանում էր Ստրավինսկու այդ հրաշալի ստեղծագործության նրբագեղությանը, որը Երեւանում հնչում էր առաջին անգամ: Երիտասարդ դիրիժոր Էդուարդ Համբարձումյանն արդեն որերորդ անգամ ապացուցեց իր բարձր մասնագիտացումը եւ մեծ ապագայի հանդեպ իրավունքը:

Ուզում եմ իմ շնորհակալությունը հայտնել միայն այդ ստեղծագործության համար խմբված անսամբլի բոլոր երաժիշտներին: Երաժիշտներից շատերն արդեն մասնակցել են «Երաժշտական նոր նախաձեռնություններ»-ին: Նրանցից է Գեղամ Գրիգորյանը, որը կատարեց երեք պիես կլարնետի համար (նույնպես առաջին կատարումը Հայաստանում): Նրա կայուն վարպետությունը բարիտոնի եւ երեք կլարնետների համար *«Էլեգիա Ջոն Քենեդիի հիշատակին»*-ի հաջողության գրավականն էր: Այդ դժվարին մանրանվագի մենակատարի պարտիան, որը կոմպոզիտորը գրել է ամերիկյան նախագահի մահվան տպավորության ներքո, առաջին անգամ կատարեց Վաղարշակ Օհանյանը: Փառք ու պատիվ նրան:

Եվ, վերջապես, *«Ճապոնական բանաստեղծությունների»* եւ լարային կվարտետի համար երեք պիեսների կատարմանը մասնակցած լարայինների մասին: Խաչատուր Այծազյանը, Արսեն Սահակյանը, Արա Ղուկասյանը, Գարիկ Թերզյանը դեռեւս Երեւանի կոնսերվատորիայի ուսանողներ ու ասպիրանտներ են: Ճիշտ է, նրանց կատարած պիեսների վրա դեռեւս աշխատելու հարկ կար, այդուհանդերձ նրանց կատարումը խոսում էր մեր բուհի լարային ամբիոնի մանկավարժների ստեղծած ընտիր դպրոցի օգտին: Կրկին շնորհակալություն բոլորին:

ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
երաժշտագետ

Արամայիս Սահակյան. «Հայ ժողովուրդ, քո փրկությունը քո ծիծաղելու մեջ է..»

Այն ազգը, որը չի ծիծաղում՝ չի ապրում (թեեւ՝ քաղցած ո՞նց ծիծաղես...): Մանավանդ՝ փշերի մեջ:

Հոռետեսները եւ հուսահատները հազվադեպ են հաղթում: Անգամ մահից առաջ հույսը չպետք է կորցնել: Երանի նրանց, որ վերջին պահին ժպտում են աշխարհին եւ նոր միայն հեռանում: Չեմ սխալվի, եթե ասեմ՝ մարդ աշխարհ է գալիս լացով, պետք է հեռանա ծիծաղով: Հայտնի է մի մարդ, որ մահից առաջ խնդրել է մի անեկդոտ պատմել իրեն՝ հետո մահանա: Այսպես էլ ուրախ-ուրախ մահացել է: Ամենաասուր կռվի պահին մի սրամիտ խոսք ասեք, եւ կռիվը երեւի կվերանա: Ինձ թվում է՝ պատերազմը նրանից է, որ մարդիկ չափազանց լուրջ են: Ուստի շատ ուրախ եմ, երբ, օրինակ, մարդիկ վերջին գիրս կարդում են վերջից, այսինքն՝ կատակներից: Այժմ «Ազգ»-ի ազգասեր ընթերցողներին եմ ներկայացնում մի շարք նոր գրառումներ, որոնք, ինչպես միշտ, իրական են եւ [illegible]:

◆

Գերագույն խորհրդի պատգամավոր Արշակ Սադոյանն իմ հարեւանն է: Վերջերս հետաքրքրվեց, թե ինչպե՞ս են թոռնիկներս:

- Դեռ չեն խոսում,- ասացի:
- Է, մենք որ խոսում ենք՝ ի՞նչ օգուտ...,- հառաչեց նա:

◆

- Անընդհատ հողային տարածներ ենք հանձնում, իշխանությունն ի՞նչ է մտածում...,- զայրացած հարցրեց մի ընտրող:
- Խնդրում եմ իշխանությանը չնեղացնել,- հանգստացրի նրան,- ես նրա ցավը տանեմ՝ որոշել է Երեւանը չհանձնել...

◆

- Ի՞նչ է միակուսակցությունը,- հարցրեց սեքսոլոգ Ֆերդինանդ Սնխչյանը:
- Միակուսակցությունը միատեռականություն է...,- իր լեզվով պատասխանեցի ես: Համոզվեց:

◆

Գերագույն խորհրդի ՀՌԱԿ պատգամավորական խմբի անդամներ Վարդան Պետրոսյանին եւ Պետրոս Քացախյանին հարցրի.

- Այսօր մեր երկրում ո՞րն է ամենածիծաղելի հարցը:
- Աշխատավարձը...,- միաձայն պատասխանեցին նրանք:

◆

Լվացվում էի աղբյուրի ջրով: Մի հարուստ մարդ հարցրեց.

- Գրպանումդ թաշկինակ կա՞:
- Ի տարբերություն քո հարուստ գրպանի՝ իմ գրպանում միայն թաշկինակ կա...,- ասացի ես:

◆

Ճաշարանի վարիչ Ռաֆիկ Պախանյանին խնդրեցի մի քիչ ոսկորներ պահել մեր շան համար: Երբ գնացի բերելու, տուփի վրա գրված էր. «Բանաստեղծ Արամայիս Սահակյանի ոսկորները: Ջարդել եւ տալ իրեն»...

◆

Զանգեցի պտուղբանջարեղենի վարչության պետ Ռաֆայել Շտայանին.

- «Ոզնու» համար հնարավո՞ր է ճարել մի պարկ կարտոֆիլ:
- Պատկերացրեք՝ ոչ մի գրամ չկա,- պատասխանեց նա,- պահեստները լրիվ դատարկ են, միայն մկներն են վազվզում:
- Որ այդպես է՝ գոնե մի պարկ մուկ տվեք...,- խնդրեցի ես:

◆

- Ո՞նց է վիճակդ,- հարցրեց մի տնօրեն:
- Շան օրի,- պատասխանեցի ես:
- Դե ասա՝ իմ օրին ես, էլի,- մեծահոգաբար պատասխանեց նա:

◆

- Կոմունիստներդ պետք է շնորհակալ լինեք նոր իշխանությանը,- ասացի պատգամավոր Լեոնիդ Հակոբյանին:
- Ինչո՞ւ,- զարմացավ նա:
- Որովհետեւ նորերի «շնորհիվ» բարձրացավ կոմունիստների հեղինակությունը...

◆

Ժամերով խոսում էինք հանրապետության պաշտոնյաներից մեկի մասին:

- Դե լավ, ուրիշ բանի մասին խոսենք,- ընդհատեց մեկը:
- Իսկ քեզ ո՞վ է ասում, թե նրանք ուրիշ բան չեն...,- առարկեցի ես:

◆

- Ինչո՞ւ բաժանվեցիր կնոջիցդ,- հարցրի մի դասախոսի:
- Իմ խելքից,- տխուր պատասխանեց նա,- ամեն անգամ կինս ասում էր՝ խանութից միսը դու առ, իսկ ես ասում էի՝ չէ, դո՛ւ:
- Հետո՞...
- Հետո այն, որ ամուսնացավ մսավաճառի հետ...

◆

Ընկերոջս՝ Ռ. Սողոմոնյանին ասացի, որ ինքը մտել է աշխարհի մարդկանց «լավագույն տասնյակ»:

- Յա, այդքան լավ մարդիկ կա՞ն...,- զարմացավ նա:

◆

Մեր գրողներից մեկի ծննդյան օրն էր: Ամեն մեկը մի թանկագին բան նվիրեց, ես էլ՝ սովորական գրիչ: Շատ գովեցին հոբելյարին: Իսկ երբ Խանզադյանը շեշտեց, թե հոբելյարը տաղանդավոր գրիչ ունի, չդիմացա եւ ասացի.

- Ե՛ս եմ նվիրել...

◆

Հիսունամյա մի սկսնակ գրող շատ էր ցանկանում ընդունվել գրողների միության շարքերը, բայց ոչ ոք չէր ուզում, որովհետեւ վատ էր գրում: Մի օր ինձ ասաց.

- Եթե օգնեք գրողների միության մեջ ընդունվեմ, խոստանում եմ՝ այլեւս չգրել...

◆

Տեսնելով, թե ինչպես են մի քանի պատգամավորներ առատորեն օգտվում կյանքից, խորհրդարանում ասացի.

- Այո, կյանքը լրիվ փոխվել է՝ մի ժամանակ կթվորներն էին պատգամավոր, հիմա՝ կթողները...

◆

Ծանոթ դասավորի տանն էի: Դասավորը պայուսակից հանեց կանացի մի կրծկալ եւ նետեց մի կողմ:

- Տեղակալիս կինը այսօր բերեց, թե իր ամուսնու մահճակալում էր:

Քիչ անց դասավորի կինը տեսնելով կրծկալը, ուրախացած ասաց.

- Էս որտե՞ղ գտար, ես էլ երեկվանից ասում եմ՝ ու՞ր եմ դրել...

◆

Պատգամավոր Գագիկ Հովհաննիսյանին ասացի.

- Գիտե՞ս, որ Վարդան Մամիկոնյանը դաշնակցական է եղել, [illegible] մոտս է...
- Հանկարծ ՀՀՇ-ի ականջը չգցես, թե չէ կփորձեն արձանը հանել...,- վախեցած ասաց նա:

◆

Արցախից եկած մի ազատամարտիկի հարցրի.

- Թուրք սպանած կա՞ս:
- Շատ...,- հուզված ասաց նա,- բայց խնդրում եմ՝ հայ իշխանություններին չասես՝ ինձ կսպանեն...

◆

- Բոլորովին միս չկա,- տխուր ասաց մսի կոմբինատի տնօրեն Ռազմիկ Դարբինյանը:
- Զարմանալի է,- ժպտացի ես,- ամբողջ ժողովրդին մորթեցին, էլի միս չկա՞...

◆

- Ես զոհ եմ նոր իշխանությունից,- ասացի մարդկանց:
- Ինչպե՞ս թե...,- զարմացան բոլորը:
- Այո, որովհետեւ բոլոր հոգսերը վերացրեց, թողնելով միայն հացի հոգսը... ■



Կայծից բոց... կամ հրդեհ Դավիթ Անհաղթի պողոտայում

Հոկտեմբերի 22-ին, ժամը 17:20-ի սահմաններում Երեւանի Դավիթ Անհաղթի պողոտայում «Արցախ» նիվերսամի մոտակայքում, ան-պասելիորեն բռնկվեց բենզին աճառող ԱԳՌ 73-57 պետհամա-նիշի ջրատար մեքենան: Վաճա-ղը «Օրբիտա» միավորման վարորդ Ալբերտ Հովհաննիսյանը, մի կերպ փրկվել է:

Ինչպես պարզվեց, բավական չէ, Հովհաննիսյանը նման գործարքի համար չուներ հրդեհային հսկողության մարմինների համաձայնությունը, խախտել է նաեւ անվտանգության կանոնները: ՆԳՆ հրշեջ պաշտպանության վարչության պետական հրդեհային հսկողության բաժնի պետի տեղակալ, ներքին ծառայության կապիտան Հովհաննես Սարգսյանը մեր թղթակցին տեղեկացրեց, թե նախնական տվյալների համաձայն, բռնկումը տեղի է ունեցել ծխախոտի կայծից, երբ ավտոմեքենայի վարորդի խցիկում կուտակվել էր մեծ քանակությամբ բենզինի գոլորշի: Կրակն անմիջապես տարածվելով, ստեղծել է պայթյունի իրական վտանգ: Դեպքի վայր հասած հրշեջներին մեծ դժվարությամբ հաջողվել է այն վնասազերծել, դրանով իսկ կանխելով շրջապատին սպառնացող վտանգը:

Դեպքի կապակցությամբ սկսվել է հետաքննություն, որն իրականացնում է Խորհրդային շրջանի պահպանության ռազմականացված հրշեջ մասը:

Արդեն վաղուց յուրաքանչյուր հայ վարորդ քաջ գիտի, որ բենզինի քաղցը լրացնելու համար պետք չէ դիմել լցակայանների օգնությանը: Այն կարելի է ձեռք բերել Երեւանի գրեթե ցանկացած անկյունում եւ փողոցում: Սակայն այդպիսի ձեռնարկման դառն արդյունքը եթե մինչեւ այժմ փորձված չէր, ապա կանխատեսելի էր...

ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Չիֆվաիձե. Խուսափել «շտապ եզրակացություններից»

Ինչպես հայտնի դարձավ «ԻՖ»-ին, Ռուսաստանի արտգործնախարար Կոզիրեւը հետաձգել է իր այցելությունը Վրաստան: Այդ կապակցությամբ Վրաստանի արտգործնախարար Չիֆվաիձեն կոչ արեց խուսափել *«շտապ եզրակացություններից»*: Այցելությունը հետաձգվել է, քանի որ *«ներկա պահին բանակցությունների համար անհրաժեշտ լուրջ հիմք չի նախապատրաստվել»*, երեկ Թբիլիսիում լրագրողներին տված հարցազրույցում հաղորդեց Վրաստանի նախարարը:

Չիֆվաիձեն ասաց, թե Կոզիրեւի հետ նախօրեին տեղի ունեցած հեռախոսազրույցի ժամանակ որոշվել է ստեղծել «լրացուցիչ խումբ», որը հոկտեմբերի 23-ից կզբաղվի Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ լայնածավալ պայմանագրի նախապատրաստմամբ: Նրա խոսքերով, այդ փաստաթղթում անհրաժեշտ է հաշվի առնել երկկողմանի հարաբերությունների բոլոր հարցերը, մասնավորապես Վրաստանում տեղակայված Ռուսաստանի զորքերի կարգավիճակի մասին հարցը: ■

Լուրերի Հոսք

Բժիշկներին 4 տարվա բանտ

Ֆրանսիայում արյան փոխներարկման ինստիտուտի նախկին տնօրեն Միշել Գարետայի եւ նրա 3 տեղակալների դեմ ֆրանսիական դատարանը 4 տարվա բանտարկություն եւ 100 հազար ֆրանկ տուգանքի վճիռ արձակեց երեկ: Նրանք մեղադրվում էին անհոգությամբ HIV վիրուս (որն առաջացնում է ՍՊԻԴ) պարունակող արյուն բաց թողած լինելու հանցանքով: Այդ անհոգությունը պատճառ է դարձել 50 հոգու վարակման եւ մահվան: ■

Նոր ցնցումներ Կահիրեում

Եգիպտոսի մայրաքաղաքի բնակչությունը նախանցյալ երկուշաբթի տեղի ունեցած աղետալի երկրաշարժից հետո շարունակում է սարսափի մթնոլորտում եւ խուճապային տրամադրության մեջ ապրել: Երեկ առավոտ հաջորդական երկու ցնցում պատահեց Կահիրեում, 2 եւ 2,4 բալ հզորությամբ: Փլվեցին մի քանի տներ, կան 4 մեռյալ եւ 35 վիրավոր: ■

ՄԱԿ-ը օգնում է Իրաքին

Հակառակ Միացյալ Նահանգների ներկայացուցչի առարկությանը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին Անվտանգության խորհրդից պահանջեց մարդասիրական օգնություն ցույց տալ Իրաքին, այդ նպատակին հատկացնելով 200 միլիոն դոլլար: Այդ օգնության կեսը, ըստ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի, հատկացվելու է Իրաքի քուրդ ազգաբնակչությանը: Բուտրոս Ղալին երեկ հայտարարեց նաեւ ՄԱԿ-ի 300 զինվոր Իրաք ուղարկելու մասին: Նրանց առաքելությունն է լինելու օգնության բաշխման վերահսկողությունը: ■

4 ռուսներ արտաքսված

Լրտեսական գործունեությամբ զբաղվելու ամբաստանությամբ 4 ռուս դիվանագետներից երեկ պահանջվեց մինչեւ նոյեմբերի 1-ը հեռանալ Ֆրանսիայից: Ֆրանսիական իշխանությունները մերժեցին հրապարակել արտաքսվող դիվանագետների անունները: ■

Արձակվեց «Կոլումբիա»-ն

Հերթական անգամ արձակվեց «Կոլումբիա» տիեզերանավը 6 տիեզերագնացներով, որոնք 10-օրյա ուսումնասիրություններ են կատարելու լազերային գեոդինամիկական արբանյակով՝ հետազոտելով Երկրի կեղեւի շարժումները: ■

Լուրերը Interfax-ի «Սնարկի», «Նոյյան տապանի» եւ մեր թղթակիցների

Քիշնեւում շարունակվում է ուսանողների գործադուլը

Հոկտեմբերի 23-ին Քիշնեւի մանկավարժական ինստիտուտի եւ Մոլդովայի պետհամալսարանի մի քանի հարյուր ուսանողներ երկօրյա ընդմիջումից հետո վերսկսեցին գործադուլը կառավարության շենքի առջեւ:

Նրանք պահանջեցին, որ *«Մոլդովան դուրս գա ԱՊՀ-ից եւ ռուբլու գոտուց»*, եւ *«մտցվի ազգային վալյուտա»*:

Մինչ երեկ նախատեսվում էին միայն տնտեսական պահանջներ, որոնք ուսանողական գործադուլային կոմիտեի անդամ Տուդոր Գուժումանի խոսքերով, Մոլդովայի կառավարությունն արդեն կատարել է: «ԻՖ»-ին տված հարցազրույցում նա գործադուլային կոմիտեի անունից դատապարտեց ուսանողների ներկայիս գործողությունները:

ՆԳՆ մի քանի պատասխանատու աշխատակիցներ եկել են հրապարակ եւ փորձել համոզել ուսանողներին դադարեցնել գործադուլը: ■

6 սպանված Վլադիկավկազի արվարձանում

Հոկտեմբերի լույս 23-ի գիշերը Վլադիկավկազի մոտակայքում գտնվող Յուժնի ավանում միլիցիայի աշխատակիցների եւ ինգուշների միջեւ տեղի ունեցած բախումների հետեւանքով զոհվել է 6 մարդ, այդ թվում միլիցիայի երկու աշխատակից, եւ վիրավորվել 7 մարդ: Այդ մասին «ԻՖ»-ին հաղորդեցին Հյուսիսային Օսիայի ՆԳՆ-ի մամուլի ծառայությունում: Բախումը տեղի է ունե- այն բանից հետո, երբ մեծա- ամբ ինգուշներով բնակեցված վանում ավտոմատ զենքից գնդա- ծվել է հանցագործության վայր ժամանած ՆԳՆ-ի խումբը: Միլիցիայի աշխատակիցները բացել են պատասխան կրակ:

Գնդակոծության են ենթարկվել նաեւ կոնֆլիկտի զարգացումը կանխելու նպատակով միջադեպի վայր ժամանած օպերատիվ քննչական խմբերը, որի հետեւանքով վիրավորվել է միլիցիայի եւս մեկ աշխատակից:

Իրավիճակի սրման կապակցությամբ Վլադիկավկազում եւ Հյուսիսային Օսիայի Պրիգորոդնի շրջանում հավանաբար կմտցվի պարետային ժամ: ■

Գոլանից հեռանալու մասին իսրայելյան ակնարկներ

Առաջին անգամ իսրայելյան պատվիրակները Վաշինգտոնում կայացող բանակցությունների արձանագրության մեջ Գոլանից «հեռանալու» մասին ակնարկեցին եւ շեշտեցին, թե ցանկանում են բանակցություններում «ճկուն» լինել, եթե Սիրիան կառուցողական վերաբերմունքի ապացույցներ տա:

Այս լուրը երեկ «սվիններով» դիմավորվեց Գոլանի բարձրավանդակի իսրայելյան քիբուցների բնակչության կողմից: Զայրալից ցույցերով նրանք դժգոհություն հայտնեցին իրենց կառավարության դեմ, պնդելով, որ վարչապետ Ռաբինը *«չարաչար խաբել է»* իրենց:

Մյուս կողմից, պաշտոնական այցով երեկ Հռոմ ժամանած արտգործնախարար Շիմոն Պերեսը հայտարարեց, որ Պապը տրամադիր է մոտ ապագայում Երուսաղեմ այցելել, եւ թե մինչ այդ դիվանագիտական հարաբերություններ կհաստատվեն Վատիկանի եւ իր երկրի միջեւ: ■

Խաղաղապահները կրակում են ապստամբների վրա

Արեւմտյան Աֆրիկայում տեղակայված ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը թնդանոթից կրակ բացեցին Լիբերիայի մայրաքաղաք Մոնրովիան շրջապատած ապստամբների վրա: Նրանք ռազմաօդանավերով ռմբակոծեցին ապստամբների կենտրոնատեղին: ■

Բժշկագիտության դոկտ. պրոֆ.
նյարդահոգեբույժ

Վ. Հ. Հովհաննիսյանը

կատարում է նեւրոզով, սթրեսային ծագում ունեցող տարբեր հոգեախտաբանական խանգարումներով, էպիլեպսիայով տառապող հիվանդների ընդունելություն:

Երբ ձեզ անհանգստացնում է տեւական ընկճվածությունը, աշխատունակության անկումը, վախը, տագնապը առանց հաղթելու կարող եք զանգահարել 53.16.16:

Ընդունելությունը ամեն օր՝ ժամը 19:00-21:00:

«Արամ Խաչատրյան» Մեծ Համերգասրահ

68-ՐԴ ՀԱՄԵՐԳԱՇՐՋԱՆ
4485-4486 Հայոց Թվական

Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբ
Գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր
ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ

Համերգաշրջանի հովանավորն է Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը

30 հոկտեմբեր

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԼՈՒԻԶ ՍԻՄՈՆ-ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Արամ Խաչատրյան.
Սիմֆոնիա թիվ 1
Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ.
Կոնցերտ դաշնամուրի եւ նվագախմբի համար, ռե մինոր
(Կնեսի Մալխասյան)
Բելա Բարտոկ.
Սյուիտ «Հրաշալի մանդարին» բալետից

Դիրիժոր՝ Լորիս Ճգնավորյան
Սկիզբը՝ ժամը 19.30-ին:
Տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» համերգասրահի տոմսարկղում, ամեն օր ժամը 11-18-ը:

ասպիցը սպառնում է Ադրբեջանին

977 թվից մինչեւ այսօր Կաս- ց ծովի ջրերը մերձափնյա տա- քներում 2,5 մետր առաջ են ե- Ըստ որոշ մասնագետների, եւ 2015 թվականը ծովի ջուրը կգա 3 մետրից ավել: Ադր- նի բնապահպանության նա- ր Արիֆ Մամեդովը հայտա- , թե Կասպից ծովի ջրի խն- կարելի է լուծել միայն Ադր- ի, Թուրքմենստանի, Ռուսաս- , Ղազախստանի եւ Իրանի պահպանության պատասխանա- երի սերտ համագործակցու- : Մամեդովը Իրանի բնա- պահպանության նախարարի հետ իպելու նպատակով գտնվում րանում: Նա լրագրողներին ց, թե Կասպից ծովի ջրի ցման եւ դեպի ցամաք տա- գլխավոր պատճառներն են ստորջրյա բազմաթիվ երկրաշարժերը, տարբեր տեսակի արդյունաբերական թափոնները ծով նետելը, որի հետեւանքով խիստ աղտոտվել է ծովի ջուրը եւ զգալիորեն նվազել գոլորշիացումը: Արիֆ Մամեդովը ընդգծեց. *«Այժմ յուրաքանչյուր օր Վոլգա գետից 12 մլն խմ ջուր է թափվում Կասպից ծով: Իսկ նախկին Միության արդյունաբերության պաշտոնյաները Կասպից ծովի ավազանում գտնվող հանրապետություններին ստիպում էին, որ խոշոր արդյունաբերական համալիրները կառուցեն առափնյա տարածքներում եւ թափոնները լցնեն ծովը»*: Վերոհիշյալ պատճառը, մամուլի ասուլիսի ընթացքում անդրադառնալով ափամերձ շրջանները ջրով ողողվելու պատճառով Ադրբեջանի կրած վնասներին, նշեց. *«Ջուրը ծածկել է բավականին շատ ցանքատարածություններ, զգալի թվով բնակելի տներ, երկաթգծեր, ավտոճանապարհներ, ջրի եւ գազի խողովակաշարեր եւ այլն»*: Վնասի ընդհանուր ծավալը գնահատելով 12 մլրդ ռուբլի, նա ավելացրեց. *«Այսօր Ադրբեջանի նավթաարդյունահանության համալիրի մեծ մասը, որը գտնվում է Կասպից ծովի ափին, սպառնալիքի տակ է»*:

Ադրբեջանի բնապահպանության նախարարի՝ Աստարա ժամանելու ընթացքում Իրանի Գիլան նահանգի օդերեւութաբանական կենտրոնը հայտարարել է, որ վերջին օրերս զգալի տեղումների հետեւանքով ծովի ջրի մակարդակը բարձրացել է 12 սմ-ով, որի արդյունքում վնասվել են նաեւ Իրանի մերձափնյա տարածքները:

ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ

Ազգ

Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ

Խմբագիր
ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Տնօրէն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ

☎ 52.16.35 գլխ. խմբ.
58.18.41 խմբագիր
56.28.63 տնօրէն

Apple® Macintosh®
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի

Azg Daily, 47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Editor H. AVEDIKIAN

ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական»
հրատ. տպարան, Երեւան 23, Արշակունեաց 2

Գրանցման թիւ 65
Տպաքանակ 20 000
Ստորագրուած է տպագրութեան 23.10.1992

Դասիչ 69149
Պատուէր 1570